չալեպի և Եղիպտոսի սուլթաններուն։ Հայեր առաջին օրեն իսկ չուշացան սերտ դրծակցություն մը ցույց տալու Կիլիկիո հողերու վրային զեպի երուաղեմ իջող Խաչակրաց բանակներուն և զանոնք առաջնորդող եվրոպական թագավորներուն և զորապետներուն իրենց նորակազմ պետության կյանքն ու զարգացումը ապահովելու հեռանկարով, առանց խորհելու որ մեկ կողմէ քաղաքական տեսակետով զբացի իսլամ պետությանց թնամությունը պիտի հրամակիրկեր, իսկ մյուս կողմէն խաչակրաց հետ սերտ հարաբերությամբ լատին կրնական ու ընկերային բարքերու որդեգրությամբ ընական ճամբար պիտի հարդարակիր հայ-լատին հարաբերությանց, որոնց զարգացումին ոչ նվաստ պիտի սատարեին պապական միջնորդությամբ ու աղդեցությամբ դիբքերնին զորացնող Վեհետիկի և Շենովայի առևտրականներն ու նավատերերը, առանց մտարերելու, որ Խաչակրներու կրոնական սկզբունքը ընդհանրապես երկրորդական աստիճանի վրա կը գտնանք ու աշխարհիկ ու քաղաքական կարգի լարժառիթներ իրենց առջև բաց առարջեզր ունեն։ Պատմության ողմիտ ժնադատությունը խղճահար պիտի չույա երբեք արձանագրելու, որ Դ խաչակրաց արշականքը զարձարվ կրոնական քարտական ու առևտրական շահագույն կատարեալ հյուսվածք մը։ Նախորդ երեք խաչակրությանց ժամանակցողներ, որոնց մեջ տեսանք արդեն, որ ամեն դասակարգի և ժամանության մարդիկ կային, դյուրությամբ դիմուած ու պատմած էին, որ Մերձավոր Արևելք, Պալքաններեն մինչև Պաղևատին առևտրական ընդարձակ շահատան մը կը ներկայացներ ու կընային ապրանքներու հաջող փոխանակություններ կատարելու գլխավորությամբ Վեհետիկի վաճառականներուն ու նավատերերուն։ Վեհետիկի համբակագիր, որ կըսէ, սմբանկներն ու իրենց պատերը Ալքափիս Ասգեղոս իշխանին իրենց խոստացած ու կին ու արծաթը սիրեցին ավելի ու մոռացան կայսեր ու պապին անձնաբարությունները։ Խաչակրները հեռացած էին իրենց նախական ծրագրեն, հետագային անխուսափելիորեն ամբութեան դատապարտուով իրենց ըոլոր ակնկալությունները։

ԺԳ-րդ դարու վերջերը Կիլիկիո հայոց ներքին կյանքին մեջ նոր հեղալոյնը մը առաջ Եկավ լուծելու ցանկությամբ Արևմտյան կաթողիկ եկեղեցվո հետ կրոնական հարաբերությանց հրատապ խնդիրը, որ թէ հայկական արքունիքին և թէ կաթողիկոսարանին մտածման գլխավոր խարիսխը կազմած էր կեռն Ա. և Հեթում լատինատեա թագավորներուն։

Այս շախով, որ հույներ Բյուզանդիոնի մեջ արտաքին վտանգներու առջև ողջ միտ քաղաքականության մը սիրույն ժողովներ եր գումարելին զիջնելու տրամադրությամբ կաթողիկ եկեղեցիկ դամանական բնույթ կրող, բայց խորքին մեջ Արքվելյան մանավանդ եկեղեցվո հիմնական սահմանադրության և կառուցվածքին վլոնա ու զեղծում չերքող հարցերու մեջ, նույն մեռվ ալ հայ եկեղեցին Կիլիկիո մեջ եկեղեցական ժողովներով կը զիջներ ուստին եկած նաման առաջարկներուն, արտաքին քաղաքականությամբ մը ապահովելու առաջադրությամբ իր հայրենի ժառանգությունը այս մեջամական այն մեռվ, որ 1089-ին Կ. Պոլս մեջ ժողովով ընդունվեցավ Արքվելյան եկեղեցվո շեմունիք վրա և յՈՒՐՃԵ Համբելումը մեկ ու կեռ դար հետո, 1248-ին, նույն խնդիրը հուկեցավ Սառ ժողովին մեջ ալ, զարձար պապական առաջարկով, բայց խոհեմարար մերժվեցավ։

Բապական ժամանակ և միտք սպառող, բայց և արձակու շահեկան աշխատություն մը պիտի ըլլար հայ-լատին և հույն լատին հարաբերությանց ընթացքին Հոռմի և Բյուզանդիոնի հետ և Հոռմի և Հոռմկալայի ու Սսո միջն և փոխադարձարար

կոփանակված պաշտոնական թղթակցու-
թյանց համեմառական ուսումնառիրու-
թյունը մոտեն տեսնելու համար աղերսը:
որ կա Բյուզանդական և Կիլիկյան վարչէ
ներում հետապնդած արտաքին քաղաքա-
կանության միջև:

Մեր աղջային պատմության ալբյուր-
ները շատ ցանցառ ըլլալում պատճառով,
դժբախտաբար, ստույդ տեղեկություններ
չումինը թե Կիլիկիո արքունիքը Լևոն Ա-ի
օրով և իրմեն հետո, իրենց արտաքին ու
ներքին շահեցողական քաղաքականության
զարգացման համար ո՞րքան մեծ գումար-
ներ ծախսեցին և ո՞րպիսի ծանր տուրքեր
դժին ժողովրդի վրա: Բայց Բյուզանդիոնի
կայսրերու և Կիլիկյան լուսամասետ թա-
գավորներու հետապնդած քաղաքականու-
թյունը նույն էր, դժվար չէ մտածել, որ
Հայոց արքունիքն ալ հետևած պետք էր
ըլլար Բյուզանդիոնի Կոմինոսոսներուն հե-
տևած շավիղին, առանց չափազանցու-
թյանց միտած ըլլալու բնականաբար:

Լևոն Ա. Թագավոր խաչակրաց Կ.
Պոլիսը գրավելեն 1204 տասնեակ մը տա-
րիներ առաջ իսկ համոզված էր, որ ա-
ռևմտյան նվրոպա շատ ավելի զորավոր
էր: Քան Բյուզանդական կամ Արևելյան
կայսրությունը: Իրմեն առաջ բարձական
փորձեր եղած էին կրոնական գետնի վրա
քաղաքական մերժեցում մը ապահովելու
Բյուզանդական կայսրության հետ, պաշտ-
պանելու մտադրությամբ Կիլիկյան առ-
մանները: Այժմ սակայն արմատյան նվրո-
պայի ամենեն զորեղ դուքսերն ու ապարա-
պետները խաչակրաց արլավանք անունի
տակ, հակառակ ինուվիկենալիոս Գրդ պա-
պի փափաքին, գրաված էին Կ. Պոլիսը
հեռավոր Թրակիայով ու Մակեդոնիայով
ու լատին կայսրություն մը հիմնած նախ-
կին Բյուզանդականին վրա:

ԺԴ րդ մեր Կիլիկյան պատմության
ներքին և արտաքին աղբյուրները անբա-
վարար են բաղդատմամբ նույն շրջանի
Բյուզանդական կայսրության մեզի ընձե-
ռած պիտի բնդարձակ աղբյուրներուն:
Ասով մեկտեղ ոչ մեկ տարակույս ունինք,

որ անբավարար նկատված մեր ազգային
աղբյուրներն ալ ցույց կուտան համակո-
ղեն, որ արտաքին քաղաքականության շ-
հեցողության համար Կիլիկյան արքունի-
քին և Հայրապետարանին բռնած զիջողա-
կան դիրքին դեմ հայ ժողովուրդին ու
հայ կղերին մեծամասնական զանգվածնե-
րուն մեջ կազմվեցան հումաց նման հեռան-
դունները ու չափավորականներու, կու-
սակցությունները՝ պաշտպանելու համար
Հայ եկեղեցվո ավանդական ուղիղ զավ-
նությունը ընդհանրապես Արևելյան վար-
դապետներու ցույց տված ուղղությամբ,
նախանձավոր հողիով մը փափաքելով՝
պահովել ազգային գոյությունն ու լրիզ
պահպանությունը իր աղջային դիմուգ-
ծով, առանց ծայրահեղ միջոցներու դիմե-
լու:

Հայ ժողովուրդը իր հայրապետական
պատրիարքական աթոռներով սկիզբն
մինչև վերջը հավատարիմ մմաց իր առ-
քելաշավիզ հայրապետներու հավատքին ու
սահմանադրության, ինչպես որ Աղեց
սահմարիտ, Անտիոքի և Երուսաղեմի հույն
Օրթոսոք պատրիարքությունները Կ. Պոլ-
սո արիկելրական պատրիարքության հետ,
ինչպես նաև ոռուսաց, վրացիներու, եկե-
րերու, բուլղարներու, ասորիներու, դրա-
տիներու, Հապելներու և նեստորական-
ներու եկեղեցիները, երբեք չընդունեցին
Ֆլորանսի ժողովով կայացած կարծեցեալ
Միուրը ու ու կը շարունակեն ցարդ ալ.
Խալիֆ մնալ իրենց հնավանդ հավատքին
մեջ:

Հոռմի համար լատ ավելի դյուրին էր
Բյուզանդիոնի արևելյան եկեղեցին հետ
միակու, քան Հայոց եկեղեցու հետ:

Հայերը ի՞նչպես կրնային հեռանալով
արևելյան եկեղեցիներու ընդհանուր շար-
քեն ու ավանդութենեն և զառնային Կա-
թոլիկ Հոռմի ենթարկյալ: Ճիշտ է, որ
միջին դարուն Միուրը մն մը դոյցավ ե-
կեղեցիներու մեջ, բայց ոչ թե Հոռմի և
Արևելյան եկեղեցիներու միջև, այլ միու-
թյուն մը արևելյան ու ոռու և բալքան-
յան ժողովուրդներու միջև, որոնք իրենց

Հոգեւոր և կրոնական պետ ճանշցան Բյուր-
զանդիոնի տիեզերական պատրիարքությու-
նը, որ տեսաց ժինչն ժի՞րդ դարու առա-
ջին կեսը։ Այս տողերը գրված պահուն
հեռագիրները հաղորդեցին, որ 1945 Հուն-
վար 31-ին տեղի պիտի ունենա Մոսկվայի
և բալանդակ Ռուսաց պատրիարքի ընտ-
րությունը և օծման Հանդեսին մասնակ-
ցել Հրամիրված են Կ. Պոլոս, Երուսաղե-
մի Դամասկոսի և Աղեքսանդրիո Հույն
պատրիարքները, ինչպես նաև Վրաստանի
կաթողիկոսը։ Հայերն ալ վերը հիշված
եկեղեցիներու նման, մասնակցեցան Ֆլո-
րանսի ժողովին իրը հարցուկան պարուա-
վորություն, եղած եղայրական Հրավերի
մը, բայց միտքե իսկ շանցուցին փոքր
չափով մը թակ չեղելու իրենց հայրերուն
Հավատքն ու պահանջություններեն, ու են
ու կը մնան ու պիտի մնան նույն նկարա-
գրով։ Ո՞րը ավելի գյուրին էր հայոց Հա-
մար հունաց Հւա Համաձայնվե՞լը, որոնք
թե քաղաքական տեսակետներով և թե կրո-
նական և դավանաբանական մերձավորու-
թյամբ ավելի ընտանի էին և Դ դարենի վեր
ավելի քան երեք հարյուր տարի քաղաքա-
կանորեն և ժամանակ մըն ալ լեզվի և մշա-
կույթի տեսակետով ևնթակա հունաց աղ-
գեցության և այնքան ալ հարակից Բյու-
զանդական կայսրության, անոր գահին Հա-
մար տված տասն և ավելի հայացդի կայսրե-
րով, թե՛ Համաձայնվիլը Հոոմի եկեղեցի-
ին հետ, որ փարստախներով հեռու էր Հա-

յաստանեն ու Կիրիկիային և ոչ քաղաքա-
կան ոչ լեզվական ու ոչ ալ քաղաքակըր-
թական ենթակայություն մը ուներ Հոո-
մին ու նույնիսկ վաղուց ձերբագատված ալ
էր Հոոմի տիրապետութենեն։ Հունադա-
գան կամ «քոյր» եկեղեցին չհարող Հա-
յեր որևէ ատեն և ոչ մեկ պատճառով պի-
տի շնեթարկվեին պապական իշխանության,
դարեր ամբողջ ծանրագին զոհոզություն-
ներով ու նահատակությամբ պաշտպանած
իրենց կրոնական ու եկեղեցական ազա-
տությունն ու անկախությունը զոհեին
ուսար, հեռավոր ու միայն արևմտական-
ներու հատուկ պապական իշխանության
մը։ Ճիշտ է, որ գրեթե բովանդակ Արևել-
յի քրիստոնյա ժողովուրդներուն, եկեղե-
ցիներուն ու արքունիքին սպառնացող ու
հետզհետե հավալող իշխամական վտանգին
տոջն ավելի քան երեք դար հույներ, Հա-
յեր, ուսուներ, սերբեր, բուլղարներ կրո-
նական պիջողականությունը արտաքին քա-
ղաքականության իրը հենակետ գործածե-
լով հաբարերեցան լատիններու հետ,
բայց անդամ մը, որ արդ կտանգը իրենց
դռներն ներս մտած եղավ, բոլորն ալ
սկսան արտաքին շահեցողությունը դործա-
ծել ներքին շահեցողականության համար,
հետզհետե զորացնելով իրենց տնտեսական
դրությունը ու վերինուրա ուժով ապահո-
վել իրենց կրոնական անկախությունը ու
զարգացնել զայն տակավ ձեռք բերած կրո-
նական առանձաւնորդությունը։

ԱՐՅԱՎՈՐԻ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ



ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԻՍՏԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

19-րդ դարի հայ եկեղեցական խոշորագույն դեմքն զերից մեջն է իրիմյան Հայրիկը:

Նա ապրել և գործել է քաղաքական և հասարակական խոչը իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջանում, որ Ծմբերկում է 1820—1907 թ. թ.։ Այդ ժամանակաշրջանում նա հանդես է գալիս որպես նշանավոր եկեղեցական, հայրենասեր գործիչ։

Արիմյանի հայրենասիրությունը դարձել էր Վասպուրականի վեղեցիկ լեռնաշխարհց։ Արծումինեցի Հայրենիքը հարուստ էր պատմական կոթողներով, պաղատներով ու վանքերով, քաղաքներով ու ջրանցքներով։ Այդ երկորի ժողովուրդը սրբությամբ պահպանել էր հայրենի ավանդությունները, ուղարկությունները, տոնակատարությունները։ Հարուստ պատմական անցյալը, այդ ավանդություններն իրենց զեղեցկությամբ ու սովորությունները անջնջելի աղդեցություն են գործել։ Արիմյանի կրոնական աշխարհայացքի կաղմակորման վրա։ Հայրենի այդ միջավայրում ծնունդ առաջ և անեց նրա մեջ հայրենասիրական զգացումը։ Արիմյանը սիրում է իր հայրենիքը, հայ եկեղեցին, կրոնը, հայրենի ավանդությունները, հայ երկրագործ դասակարգը։ Նրա սերը զեպի երկրագործ, մշակ դասակարգը չերմ է, քանի որ հայրենիքը իր դոյցությամբ այդ ջլապինդ ամրակուռ ձեռքերի վրա է հիմնված։ Այդպես է մտածում Արիմյանը և նա սիրում է և փայտայում է երկրագործի ժամը, նրա հերկած հողերը, հիմնում նրա աշխատանքով, լսում նրա սրատմած հեքիաթներն ու ավանդությունները, աղբում զրանցով, օրհնում ժողովորդի վաստակը։

Նրա քրտինքը սուկը համարում և կոչ անում նրան որ նա իր ստեղծագործ մեռքիավ ավնվի ամուր, էլ ավնվի աշխատավորվ ու ըստիքանքով լծվի ու այլ հոգի սշակմանը, ձոխացնի և երկիրը լցնի առաստաթյամբ։

Գյուղացու օշախը, թռնիքը և երգը Արիմյանի համար հավերժական սրբություններ են, ուստի և նա հորդորում է խնամքով և երկյուղածությամբ պահպանել այդ սրբությունները։ Գյուղացու զութանը, աքորը, խոփը, նրա օչափը Արիմյանի համար սրբություն սրբոց են, արևի լույս, կյանքի աղբյուր, ստեղծագործում։ Այդ ուժը, — իրատում, չ երիմյանը, պետք է պահել աչքի լույսի պնս։

Հայրենի քարը, հողը, աղբյուրը կամ գետը, ծառն ու ծաղիկը սիրելի են Արիմյանին։ Նա գիտե այդ բոլորը սիրել և սիրելի գարենել։ Ահա նրա հայրենասիրական անհանդչելի բոցի հավերժական ջերմությունը և լույսը։

Նա կարողանում է հևագոր ու ժողովուր անցյալը շազկապել առօրյային և այս երեքի մեջ զնել լր ոգին, իր հայրենասիրությունը։

Սերը առ հայրենիքը, եկեղեցին, հայրենի կոթողները, ավանդությունները, երկրագործ ժողովուրդը նա արտահայտել է իր դրական ստեղծագործությունների մեջ, սրոնք լույս են տեսել զանազան ֆամինակներում։

Արիմյանի Հայրիկի տպագրական առաջին գործը «Հրավիրակ Արարատյան» երկն է, որը լույս է տեսել 1850-ական թ. թ.։

Հանձին Արիմյանի, նրա «Հրավիրակ Արարատյան»-ի մեջ մենք տեսնում ենք

կովկաս, փորձված, անսահանջ հայրենաւսերի:

Այս երկի առաջաբանում թրիմյանը դրում է.

«Զօրութիւն սիրոյ հայրենեաց այնչափ բռնացաւ յիշ վերայ ժինչև հան և յափըշտակեաց յինչն ի պանդխտելոյս զոգիս իմ եւ սիրու եւ տարաւ այսպիսեօք ի հայրենին և անդ ի ցանկալի վայրա նորին ճեմցուցեալ զիս չատ լազոյց և ի տեղին յորսում արտասուեցին մի աչք և քորդ արտասուելոց են, ո՞վ ընթերցող, եթե և դու իբրի զիս ըմբռնեացիս նոյն կապանօց սիրոյ հայրենեացն եւ քո սիրու եւ հոգին ի ժեն ելցեն եւ ընդ իմոյն գնային անդր: Բայց ես աղաչեցի զսէրն այն զիս միայնակ չվարել, այլ եւ ընդ իս դամօրէն մանկուն Արարատեան աշխարհն, որ զտեալք ի մայրենի ծոցոյն ցան եւ ցիր կան ընդ քարուանկին կողմանս տիեղերաց եւ կարօտ են իբրև զիս եւ նորին դիմաց հայրենույն¹⁾:

Պարզ է խոսում Հայոց Հայրիկը: Հայրենիքի սիրը, ասում է նա, այնպես ինձ հաղթահարեց, որ խլեց ինձնից իմ սիրուն ու հոգին և տարավ հայրենիք և այնտեղ ինձ ման ածելով լացացրեց. և որտեղ ես եմ արտասվել, այնտեղ կարտասվես նաև, դու, ո՞վ իմ ընթերցող, հայրենիքի սիրո նույն կապերով կկապկավես նաև դու և քո սիրուն ու հոգին նույնպես քեզանից հրաժարվելով իմինի հետ կերպան հայրենիք:

Բայց ես չուզեցի այս սերը միայնակ վայելել, շարունակում է նա, այլ ցանկացա, որ այս սերը վայելն Արարատյան աշխարհի բոլոր մանուկնեղը, նրանք, որոնք մայրենի ծոցից անհտաված ցան եւ ցիր են եղել աշխարհի չորս կողմերում և ինձ պես կարու ու ծարավի են հայրենիքն:

Հայրիկի քարոզը պարզ է և բերում, նա չատ բավ գիտե, որ բոլորն եւ պիտի

բոցավառվեն հայրենիքի սիրով, ինչպես բաքը, բայց նրան տատասախություն են պատառում հայրենիքոց պուրա, օտար շորիզոնների տակ գտնվող ճանուկները, ահա նրանք են, որ ամենից չատ կարիք ունեն հայրենիքի խոսքին: Նրանց է, որ իր երկով թրիմյանը պիտի կապի հայրենիքի հետ և նրանց ազատադրի օտար միջավայրից և հայրենիքի սիրով պիտի պօավի և բերի հայաստան:

Այսպիսով թրիմյանը խնդիր է դնում իր առաջ օտար երկրներում, աշխարհի շորս կողմը գտնվող հայ մանուկներին բերել հայրենիք, ինչպես որ իրենից «Հան եւ յափշտակեաց յինչն թ պանդխտելոյս զոգիս իմ եւ սիրու եւ տարաւ ի հայրենիք»: Նույն ձեռվ ցանկանում է, որ հայրենիքի սերը պանդխտության մեջ գանվողներին նույնպես բերի հայրենիք: Հայրենիքը ունեղ և կամգուա պահելու առաջին նախապայմանն էր այդ: Բայց ի՞նչպես իրականացնել այդ: Դրա համար անհրաժեշտ է պանդխտի սրտում և հոգում, հայրենիքի սերը բոցավառելով, անհրաժեշտ է դրիլ և նրան ցույց տալ հայրենի երկրի գեղեցկությունները, պապերի ու հայրերի կատարած գործերը:

Եվ նա ձեռնարկում է «Հրավիրակ Արարատյան»-ի ստեղծագործությանը: Այս հիմքի հայրիկի նպատակն է հայ մանուկներին կապել հայրենիքի հետ և նըրանց համախմբել մայր հայրենիքի շուրջը, այդ երկում է նույն առաջաբանում դրված հետևյալ տողերից:

Ըլրաբէս ցուցաք վերագոյն, թէ հայրենացն սէր վագեաց գլեզ ընդ ժամկտուով յինքն (ընդգծումը մերն է), տակայն պիտոյ ձեղեւ մեղ անդամոր ախողինի քնար իմն առ ի հարկանել զամ ընդ ճեմերն մեր ի հայրենեացն վայրու, արոյ ճայն քաղցը եւ անոյշ լոէր անդ համգուցեալ ականջաց քերթողահարցն մերոց Ասհակայ, Մեսրովպայ և Մովսեսից²⁾:

1) Ամբողջական երկեր երիմյան հայրենիքն Շնորհ-Թոր 1920 թ. էջ. 7. Օռաջաբան:

2) Ամբողջական երկեր երիմյան հայրենիքն Հայրենիքն Շնորհ-Թոր 1912 թ. էջ 81.

Հայրիկը շանկանամ է հայ մանուկներին հավաքել այնպիսի քնարով ու երգով, որպիսին երգեցին Սահակը, Մեսրոպը, և որենացին:

Այսուհետեւ բայց մի՞թե անարուեստիս բանից թերութիւն երբեւ քերթողի դատեցի¹⁾:

Երկմտում է Հայրիկը և բայց է անում իր հոգին: Հերազի, զուցե իրեն չի հաջողվել Սահակի, Մեսրոպի և Խորենացու քամրը հնչեցնել, բայց մի՞թե այդ կարող է դատապարտելի իննել, ոչ ամենելին:

Եվ մի քանի տող ներքեւ նա տալիս է զրա բացատրությանը:

«Այլ թեպէտ յայսոցիկ կատարելու թեանց թերացեալ գտանիմք յերկասիրութեանս այսմիկ, սակայն ոչ ի լի հայրենասիրութենէ. զար գրեք իրը զկենդամի պատկեր տպաւորեալ եմք ի սմիմ ընդ որ եայել ուրուց և յանձին զգալ ինչ, յիրաւի չէ նա ի կարգի հայրենասիրացն²⁾»:

Թերեւ գրական կատարելության տեսակեամից իմ այս երկասիրությունը թերություններ ունենա, Հայութաբարում է նորիյանը, սակայն Հայրենասիրությամբ այն անթերի է և լի է Հայրենի սիրով, որը տպավորել ենք մեր երկասիրության մեջ որպես կենթամի պատկեր.

Ի՞նչ խոսք այն ժամին, որ Խրիմյանը զգում է իր հոգու մեջ վերակըռող, ամեն զգացումից բարձր ու վեր դառնող Հայրենասիրության զորությունը, քանի որ ինքն ևս զգում է, որ ամեն կողմով և ամեն կերպ կլանված է այդ սրբազն զգացմունքով, որ ինքը միայն դրանով է շնչում և ապրում:

Ինչպես հետո կտեսնենք, այս և նման արտահայտությունները Խրիմյանի Հայրենասիրության ամենաթույլ մըմունիներն են միայն, առաջին թօթովանքները: Նրա

երկերում Հայրենասիրությունը հաճողն է թերված աստիճանական զարգացումով:

Խրիմյանը Հայրենասիրությունը խըրախուսում է հայ ժողովրդի պատմական անցյալով և այն կոփում նրա ներկայով:

Պանդուլիստ մամուկների սըտում հայրենիքի սերն ամբազնելու և զարգացնելու նպատակով անհրաժեշտ է դանում, որ նրանք ճանաչեն իրենց Հայրենիքը, ճանաչեն լավ և մատիկից, գիտենան նրա անցյալ պատմությունը և այն փաթորիկները, որ ապրել է նա, ճաշակեն նրա անցյալի փառքը, տեսնեն նրա ստեղծագործությունները, հիանան նրա կուլտուրայով, նրա ստեղծագործ ոգու մեծությամբ ու հզորությամբ, լուսափեն նրա քրտնավաստակ աշխատանքի աղբյուրը, գլան աշխատանքի ամենակարող, ամենասատեղծ վեհությունը: «Հրավիրակ Արարատյան»-ի մեջ կենդանի խոսքով և օրէնակներով նա ներշնչում է արդ զգացումներն ընթերցողին:

«Հրավիրակ Արարատյան»-ի առաջին նվազում Հայոց Հայրիկը պանդիստության մեջ գտնվող Հայերին նախ ցույց է տալիս աշխարհի ստեղծագործությունը, արժինքն Աստծու առաջին քայլը, նրանց տանում է զրախոս և ասկա նրանց տեղափոխում Արարատյան երկիրը, նկարագրում և ի տես Հանում Արարատյան դաշտն իր բուրու գեղեցկություններով ու բուօպկան կենդանական վարթամությամբ, պտտեցնում Երասիի տիերը, պատմում Երասիի և Արարատյան դաշտի նախկին ծաղկյալ վիճակը, և ցուցադրում ներկան, ապա նրանց տանում Մասիս և իր առաջին երդը վերջացնում Ս. Հակոբ Մծբնա Հայրասետի պատմությամբ, Մասյաց ստորոտում Ս. Հակոբա վանքի կտուցմամբ և Ակոռի գլուզի Հրաբիսային կործանմամբ:

Առ քեզ արևելեան առ պերճ աշխարհը Հայ Հայաստան

Հրատիրեմ ըղբոյլ մանկական որ արդի քեն կան հեռացեալ: Ուզ, գիտեմ, յոյժ կարատիս որպէս ըղմայր որդեկորոյր

1) Ամբողջական երկեր երիժյան Հայրիկ, Նյու-Յորք 1912 թ. էջ 10:

2) Նույն, էջ 10:

Նտղելիք գիմաց նոցին մնացեալ կարօտ
քեզ ընկերկար:
Առաւել և քան ըզմայրդ քեզ կարօտին
և քո մանկումք,
Ոյք ահա թէ ոչ ոտիւք գէթ անձկայրեաց
սրտին սիրով
տոփմտա մմոր նմաղցմմաւ գ նղբցց նոփ
տենչ և վայերուշ
իրր ի վարձու զիս պրաւեցին լինել նոցա
ինձ առաջնորդ¹⁾:

Այսպիսի տողերով է սկսվում ՅՆՐԱՎՈՒ-
ՐԱԿ Արարատյանշը:

Այս տողերից տեսնում ենք, որ հայ-
րենա ությունը Հայոց Հայրիկի համար
անվլ ոլի ճշմարտություն է, այնպիսի
պարտականություն, որ քննվել և վերա-
նայվել մի կարող: Եկ բացի այդ Մայր
Հայաստանը կարու է իր որդիներին և
նրա կարուր համարակ կարու չէ, այլ
ուղեկորույս մոր կարու: Փոխարարձ սի-
րու, կարոտի այս կամը բնական է և ան-
քականի:

Եկ ահա Հայոց Հայրիկը դարձել է
նրանց առաջնորդը:

Եկ որովհետեւ Հայրիկը ինչն էլ Հայ-
րենիքց հեռու է և չի կարող հայրենիքը
տեսնել, ուստի նա զիմում է իր մտքի և
սրտի թեմիքին, զիմում է նոյի դարի
հողմերին, որ իրեն և իր փայտայած
հայկան սիրաւուն մանուկներին թոցնեն,
տանեն Հայաստան:

«Հնչեցէք ապա հողմունք որպէս Նոյ-
եան անդ ի դարուն,
Զիս ի թես առեալ տարայք ի յԱյրաքաս
իմ Հայրենին.
Եւ լնդ իս թե օք սրտից թռուցեալ եկայք
հայկեան մանկունք,
Եկայք դուք տան թորդումայ, ո՛վ տարա-
գոյն զարմք և զաւակք,
Ո՞ր լնդ ոլորտս աշխարհի կայք տարա-
ծեալ դժբախտարար»²⁾:

1) Ամբողջական երկեր Արիմյան Հայրիկի,
Երևան-Յարք, 1918 էջ 81.
2) Նույն էջ 87.

Այս տողերից ակնառու կերպով հետե-
ղում է այն միաքը, թե յուրաքանչյուր
մարդ, որքան էլ հեռու մինի իր հայ-
ւնսիքից, այն կարող է աեստել, շոշափել,
դրակ, այսինքն հոգեպես ապրել ու չնշել
հայոնիքով, իր հոգում ունենալ իր հայ-
ւնսիքն ու ժողովուրդը, որպես իր ամ-
բողջականության անբաժանելի յասը:

Դրախտը, որ ըստ ավանդության
դանվել է Եփրամ և Տիգրիս գետերի հո-
վատմարում, հանգես է զալիս Արիմյանի
երկերում: Նկարագրելով զբախտը և նրա
հետ կապված մարդկային կյանքի առաջին
քայլերը, Արիմյանը անցնում է Արարա-
տին:

«Պատրաստեալ ելէք յուղի արդ ելա-
նեմք ի յԱյրաքաս
Եւ ի պիճակ սեպհաման Արշակունեան զեհ
արքայց»:

Լեռներով լրջապատված Արարատյան
գալարը նմանեցնելով պարսպապար այդու
Հայրիկը թվում է Արարատյան գալարի
բարիքները:

Արիմյանն ընդհանրապես տնտեռու-
թյունն ընդունելով ժողովրդի բարեկեցու-
թյան հիմք միաժամանակ այն համարում
է Հայրենիքի պահպանման զորավոր միջոց
և արդ է պատճառը, որ նա իր բոլոր
գրվածքներում բացայն չի անցնում հո-
գագործության, արեւեստների, ընդհանրա-
պես տնտեռությանը և աշխատանքին վե-
րաբերող ինդիքների կողքից: Այս հիմնա-
կան ելակետը աշխաթող շանելով նա հա-
ճախ չելուում է նաև այն բոլոր, ինչ որ
առօրյա կյանքում շատերը չնշին կամ ան-
արժեք են համարում: Ոչ, Արիմյանի հա-
մար տնտեռական կյանքում չնշինը կամ
աննշանը գոյրություն չունի: Նրա տեսա-
կետով հասարակն ու աննշանը նույնքան
անհրաժեշտ են, որքան սերմը, լժկանը,
դութանը և այլն: Եկ նկարագրելով Արա-
րատյան դաշտի բնական գեղեցկությունը,
Ասախի վեհափառ տեսքը, դաշտի ջրա-
ռասությունը, Երասխի հավերժական ըն-
թացքը և այլն, նա կանգ է առնում Արա-

բատում աճող բույսերի վրա, նա նշում է բրինձը, բամբակենին, ցորենը, դարին, բաղմատեսակ բանջարները, խաղողի տունկը, մըզերը բազմազան տեսակներով, ցուցալրում ոչխարների և այծերի հոտերը, ձիերի երամակները, ընտանի ու վայրենի թաշունների երամները, Երասխում խայտացող ձկների գտառները և այլն, Արկայն չժողոահալով շեշտել հայ գեղջուկի առատ կյանքը և զվարճությունները վրշտացած բացականչում է.

ՅՅայդ անդեայս բեղմնաբեր մինչ արկանէր մշակն զալրման, Յուսալիք էր ընդ միոյն զհարիւրաւորն ժողովին. Ափսոս, այդպիս արժմիկ, իսուսանացեալ կան բնաւին, Հասկաթուու ընդ ցորենոյն փուշք մոլախոտ են արդ բուսեալ. Յայս երկիր պարարտահող ոչ եղնամուլք ձրդին զարօր. Ոչ ի Շերկ սերմահան զրուորն ինու լուսով ի ցան. Ոչ հենաղն ըղպերանդին առեալ ուրամին դայ յանդատան. Եւ ոչ սայլքը որացիւք բարձեալ դընան ճորժչելով. Կամն օրանք ի կալատեղս դէզ հարկանի բըլրատեսակ. Կամ ատօք ցորենոյն թեղ շեղջակուտի լեռնականպէտ. Եւ լրցեալ ի շտեմաբան ցընծայ մըշակն ի ձմերայնի:

Դրվատելով Արտարայան դաշտի բներք առատությունը, նկարագրելով նրա անցյալի առատությունը Արիմյանը կանոն է առնում իր ներկայի վրա, ներկան Համեմատում է անցյալի հետ և ցալագին ավուսն է դուրս թքչում նրա սրտի խորքերից: Արիմյանը դժուն է, սանցյալը հաքուս էր, առատ, ճոխ և փարթած, իսկ իր ներկան աղքատ է, չքավոր և դա հոգեպես դնցում է նրան:

Մինչ անցյալում մշակը սերմը հողին հանձնելով մեկին հարյուք էր ստանում,

իր օրերում, սակայն, այդ հողերը անցակ են և խոպան, հասկերով լի արտերի փոխարեն վուշ ու տառատկ է տեսնամ հայրենի հողերում, այս պարարտ հողերում եղներ ու արոր չի տեսնում, սերմնացանը չկա, որ հողին սերմ հանձնի, չի երևում ուրախ հնձողը. որը դերանդին ուսած գեափի արտօր շտապի, չկան բեռնավորված սայլեր, որ նրանց ճոխնչը լսի, կալատեղերում բյուանման ցորենի դեղեր չկան և ոչ էլ ցորենի շեղջեր, որպեսդի հողի մշակը, սշխատալողը այն իր շտեմարանը փոխադրելով ցնծա և ուրախանա և գաֆան մերանը դիմանալ կարողանա: Բայց ինչո՞ւ է այսպիս, ի՞նչն է բացակայում: Անշուշա աշխատանքը և աշխատափրը, եթ Հայրիկը բացատրում է.

«Եւ զի հունձք և հողագործք յերկրէս յուոթի պակասեցան. Որ չունէր թիղ մի տեղի բնաւ երբեմն անշակեալ, Այսօր համայն իւր գնտին կայ կորդացեալ և անարօր Զի կորոյս հայոց աշխագհ զմեծ Արտաշեսն մըշակող¹⁾: Իրիմյանը առանձին բավականությամբ նշում է զյուղացու աշխատանքը, զյուղատնտեսական արտադրանքը, ոչխարի կիթը, ոչխարի խուզելը, բրդից գործվածքներ պարարտելը գյուղում և այլն: Ահա մի նմուշ.

«Ոչ ևս հովիւն կենսառէտ յարդ վտակութիւնը լրստակաջուր կամ խալին տէրն ի կտուրս դայ ի խուզել ըզդեղմնաբարձս, Եւ կանանց ոստնագործ նիւթ ընծայել ասրեղինաց, Ոյց մատանց ճարտարութիւնը ցարդ տեսնեն ի Հայաստան նարօտ, նարօտ հիւսուածք ի դորդս. ի պէս սէս գործըս մատանց²⁾:

Գյուղատնտեսնության այս ճյուղն էլ նա չի տեսնում նկարագրվող Արտարտում:

1) Նույն, էջ 33:

2) Նույն էջ 36:

Եկ անակնկալ կերպով նա հիշում է
պատճական հեռավոր անցյալը, տեսնում
իր անմխիթար ներկան, երազում մի վի-
ճակ, որ չկա թշվառություն, ոչ պատե-
րազմ ու խաղմարար աշխարհավեր.

«Վաւ, քանի՞ քաղցր էր նոցին կենցաղ
երկրիս Այրարատայ,
Յորժամ ոչ էր բռնաւոր և Հարկահան ա-
նագորոյն,
Ոչ կը պիումըն անաւագին և աղաղակ զըր-
կմցնլոյն,
Ոչ իշխան, ոչ իշխեցնալ կամ թաղավոր և
ժողովուրդ,
Ոչ զօր, ոչ որատերազմ եւ փազմարար աշ-
խարհաւեր»:

Ահա Հառարակական մի դոյսպիճակ,
ուր ոչ բռնավորն է իշխում և ոչ էլ դա-
ժան Հարկահավաքը, ոչ Համբաւակություն
կա և ոչ զրկվածի աղաղակը, ոչ իշխան
կա, ոչ թաղավոր, ոչ զորք և ոչ պատե-
րազմներ:

Սա Հայրիկի իդեալն էր մարդու և
աշխարհի վերաբերյալ և այս տողերը մնո-
րուում են նրան որպես ոսցիալական ան-
արդարությանը Հակառակորդ մարդու:
Սակայն շարունակվնք,

«Ոչ ի առւր ձուլէր Երկաթ, այլ ի
մանգաղ և գերանդի
Լոկ ի պէտս Երկրագործին, ոչ մարդոյն
մարդախոշոչ:
Զէր սահման լարաբաժնին ոչ արդեստանը
ցանկապառեալ,
Ոչ պաճարաց կամ խաշանց վերայ զըրոշէր
նշան տաղին,
Զի բարբառ դժոխալուր չէր լսեալ առա-
խմ եւ քոյժ:

Երկաթից որեր չափուի ձուկել մարդիկ
ոչնչացնելու Համար, այլ մանգաղ և գե-
րանդի պիտի չինել երկրագործությունը
դարձնելու Համար: Այսպիս է դնում
խնդիրը Արքմանը:

Ո 3.

(ՇԱՐՈՒՆԱԳԵԼԻ)





ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՂՄԱՅԻՆ ՄՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԱՏՎԱԾՆԵՐՈՒ ԶՈՂԸ¹⁾

ՏԵՇ. Ռ. Ա. Մ. Մ. Մ. Ա. Դ. Հ.

Տյառնական ժատադը կտարբերել ու զորմության ու գոհության ժատադներեն :
Տյառնականը կզուվեր անձի մը հաջողության կամ ձեռնարկի մը բարի վախճանին համար, զոր անձ մը կանխավ կիսուտանար Աստուծո կատարել: Այս իմաստով զոհ ժատուցանելը քրիստոնեութենեն ալ հին է, ու խոստացված ժատադ մը ըլլալուն համար անոր զանցառությունը կհավասար երդմնազանցության, որ չառ մեծ հանցանք էր: Հին ժամանակ Տյառնականի առաջատանը անձ ունեին այս ժատադը:

առաջին օրերը կնկատվին Կարսակետի տոնը ու Ալխարհամատյան կիրակին օրը: Հովհաննես պատմաբան կաթողիկոսը կրպատմէ, որ Աստուծունաւատակը ուխտած էր Սբ. Գեորգա տոնին ոգը Տյառնական պատարագ ժատուցանել նոխազ մը զոհելով: Տյառնականի առվորությունը զոյություն ուներ հին Հրեաներուն քով, որոնց մեջ թերեւ անցավ Հայաստան: Հին Հունաստան, Հոռոմ ունեին այս ժատադը:

ԿԱՌԵՑԵԼՈՅ ՀԱՇԵՐ

Քաղաքակիրթ թե վայրենի բոլոր հին աղուերը սովոր էին ննջեցնելոց հիշատակին համար հասարակաց ճաշեր սարքելու:

Այս նորատակով սարքված Հրեական ճաշերու գոյությունը կիմանան Երեմիա Մարգարեին «Սուզի Հացի» ու ԱՄիսիթարության բաժակը-ի ակնարկություններն ։

Եթև մեռելի մը վրայով միկիթարություն տալու համար սուզի Հաց պիտի չբրածանեն ու անոնց հայրերուն ու մայրերուն համար միկիթարության բաժակը անոնց պիտի շնուրնենց (Երեմիայի մարգարություն Գ. 82—7):

Հեթանոս Հայաստան նույն սովորության կհետևեր: Ասոր առաջին օրինակը կտեսնենք Մաժան քրմապետին զերեզմանի շուրջ կատարված հողեւանգստան հավաքումներին ու հասարակաց ճաշերեն,

որոնք առեղի կունենային Տիգրան թագավորին հրամանով: Մաժան քրմապետին Բագինն ու անոր շուրջ սարքված հոգեհանգստան ճաշերություն տեղի ունեցած էին Հայոց Սոյեմու կամ Խոսրով թագավորներուն հրամանով (ըստ քննական տեսությամց), քանի որ այս երկուքը թագավորեցին 140-են մինչև 218 թվականներուն միջև այսինքն Խորենացիին ավանդած Տիգրանին (ոչ ալխարհակալը) չըջանին 151—193 թթ): Իսկ եթե անպատճառ Տիգրան անոնմ թագավորի մը փափակինք վերապետ Բաղինին հիմնարկությունն, այդ պարագային կրնանք Տիգրան 7-րդը ընդունել իբրև եղբայրը Մաժան քրմապետի, որ թագավորած է Թրիտոսս զերշ 60—61 թվականներուն: Այս Տիգրանը Հրեաստանի Հեթովդեսի Սեծի թոռան որդին էր ու Հայոց Տիգրան անուն կըող թագավորներուն վերջինը: Խորենացին ալ իր պատմության մեջ

1) Ակիզը աես հիշերածէն, Հանգ., Փետր., 1945 թ. 1

Մաժանի եղբայրը «Տիգրան վերջին» կան-
վանն, երբ կըսէ. «Թորում պատմէ ի մեհե-
նիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ ար-
քայի Հայոց պատմեալ զգերեղման եղ-
թորն իւրոյ Մաժանայ քրմակեափի ի բար-
նացն աւանի, որ ի Բագրեւանդ զաւառի,
Բագին ի վերայ գերեղմանին չինեալ, ողի
ի զոհիցն ամենայն անցաւորք վայելիսցին
և ընդունիցին հիւրք երեկօթիւք» (Տես
Առենացիի Պատմությունը Բ. մաս, Էջ
311):

Ննիցեալներուն հոգվույն համար
սարգմած արս ճաշը միակ փաստն է Հե-
թամուն Հայատանի սովորության: Հեթա-
նոսական այս սովորությունը ավելի աղմբ-
վացավ քրիստոնեության շրջանում: Հա-
յաստանյայց եկեղեցին այ որդեգրեց այս
հին սովորությունը:

Թովմաս Արծրունին իր «Պատմութիւն
տանը Արծրունեաց» գրքին մեջ (9-րդ
դար) կպատմեն, որ Արծրունյաց Գաղղիկ
թաղավորը իր Հանգուցյալ Գուրգեն եղ-
րար հոգու համար պատարագներ ու զե-
նումի զոհեր կմասուցաներ ամեն տարի
(Թովմաս Արծրունի, «Պատ. Տանն Արծրու-
նեաց, Էջ 323—324):

12-րդ դարում Հայ պատմիչ մը՝
Մատթեոս Առուայեցին՝ իր պատմության
մեջ Կհիւն, թե դոդ Վասիլի մահվան առ-
թիլ մատակներ մորթիվցան:

Ներսես Շնորհալին իր «Ընդդհանրա-
կան»-ին մեջ Հարոց մասաշին մասին խոսե-
լով կը գործածե զի զադքասոն կերակրե-
լով ողորմութիւն դրցեն նոքա միստու-
ծոյն բառերը: Ատեփաննոս Օրբելյան իր
«Պատմութիւն տանն Միսական» գրքին մեջ
(13-րդ դար) Կհիւատակե Գենտեկոստեփի
օրը և Միաբաններու սարքած հոգեհան-
դասոյան զուարակներուն ու զառնուկներուն
ճաշերը, որոնք աղքամաներու ու կարու-
յալներու պետք կրացնեին (Էջ 361—362):

Հոգեհանդաստեան ճաշերը հին ժամա-
նակները տեղի կունենային դերեղմաններու
շուրջ՝ այսպիս կընեին եղիստացները ու
Հրեաները ու այսպիս ըրազ նաև Հելլեն
Աքիմուր Պատրոկլեսի մահվան առթիվ.

նույն ըրազ նույնպես Մեծն Ալեքսանդրը
Դարեհ Կողոմանոս թաղավորին համար:
Գրդ դարում Հռոմեացիք, անտիոքիցիք ու
Փոքր Ասիր քրիստոնյաները հոգեհանդաս-
տան ճաշերը եկեղեցին ու դալիթներուն
մեջ կը սարքեին:

Հայկական հեթանոսության օրերուն
հոգեհանդաստան ճաշերը գերեղմաններուն
շուրջ կկազմակերպվեին: Հայաստանի քր-
իստոնեության շրջանին այս սովորու-
թյունը պահպեցավ, հւտելով մյուս քր-
իստոնյաներու սովորության ու սույն
ճաշերը Տյառնական ճաշերուն նման կը-
սարգիլին եկեղեցիներուն ու դալիթներուն
մեջ, ինչպիս կվկայի Շնորհալին «Ընդ-
հանրական»-ին մեջ:

Տաթեացին կպատմեն, որ վանքերու
կամ եկեղեցիներու զալիթին մեջ այս տե-
սակ ճաշերը հարմար չընալով սկսան գե-
րեղմանի շուրջ ճաշել, որովհետեւ սույն
ճաշերին ընթացքին սեղանին նյութն էին
մաղեններ, արմտիքներ ու գինին, որ
կարդրեցներ կրչնականները, որոնք լաւագին
ձայներով կերպեին նման հեթանոսական
օրերուն սովորության պատմելով նաև
ննջեցյալներուն առավելությունները: Կոչ-
նականները, ընդհանրապես, կըլլային աղ-
քատ ու թշվառ հրավիրյալները, ինչպիս
որ Արծրունին իր պատմության մեջ կա-
վանդին, որ Գաղղիկ թաղավորին հոգեհա-
տին մեջ ներկա էին առդքասաց, որրե-
րում, այցրիներուն, տոնակներուն ու
տուառապյալներուն զասակարգը:

Անապունք դոհին համար մորթելին ա-
ռաջ խաչին առջն աղ կրնեին, կարգ մը
սաղմուններ կերպեին ու նույն աղը մնա-
սունին կերցնելին վերջ կմորթեին ու կե-
փեին:

Գինիին սովորությունն ու երգերը՝ հա-
յերի դատ ուրիշ աղպեր ալ ունեին:

Կարգելոնացիներն ու ասորեստանցի-
ները աղապներու ժամին կգործածեին
զայն ու կպարեին: Գինիին սովորությունը
կատարյալ հեթանոսական էր: Հին Հելլեն
ները, ինչպիս որ տեսանք, մեռներուն զե-

քեզմանի վրա կթափեին դայն, ինչու որ
ըստ Աքիլես գյուցազնը, որ Պատրոկլեսի
մարմինը այրելու ատեն անոր խարույկի
շուրջը դետինը կթափեր ու մեռյալին Հո-
դին կկոչեր (տես Հոմերոսի «Իլիական»-ը
էջ 416):

Հայ կիները ունեին իրենց ժամանակոր
ննից յալներու օրը, որ կամավանվեր և այսի
ուրբաթ։ Այս սեղանին կմասնակցեին
միայն կիներու դասակարգք։ Այդ օրը
հանդուցյալի աղջականները ճաշի կհրա-
վիրեին իրենց սեռակիցները, որովհետեւ
կանանց համար սովոր չէր հասարակաց
ընդհանուր կոչանքներուն ժամանակցել, բա-
սի չքաղոր այրիներեն, որոնք կրնային
միայն աղջականներու հետ հողեհանդսայան
ճաշերուն երթար։

Հայ կիներու այս ժամանակոր ճաշի սո-
յորությունը մեզ կապանդե Հովհաննես
Երգնացին։

Կովր թրը ժամապ սեղան չէր բերվեր։
Հին Հայերը կովր կը նկատեին իրը խոր
խալարի մեջ բնակվող «վիշապակերպ»
կենդանի մը։

Ներկված համկիթներու գործածու-
թյունը շատ հին է։

Հին Եղիստոսի, Հովհաննանի ու Հով-
հանդ դարնան սկիզբը աստվածներու, ձ
կնվիրեին իրը խորհրդանշան արդաս-
վորության։

Պարսկաստանի ու Հնդկաստանի մեջ
ձուն նմիրական կը համարմեր ու աշխար-
հի ստեղծման ամանորությանց հետ կապ-
ված էր անոր ալ ավանդությունը։ Հրեա-
ները համկիթը իրենց պատերին մեջ կը
ճաշեին, իսկ պարսիկները ձուն զունավո-
րելով իրարու կրնացեին։ Եթրոպան և
Հիներն ժառանգեց այս սովորությունը։
Միջին դարուն այլաղան կրոնական նկար-
ներու ու գործերով դատելի առիթին ձու
կներեւին Եվրոպայի մեջ։

Հայեր ալ այս սովորության հետևած
էն ու կարմիր համեմիթը դատելի սիրական
սովորությունը դարձալ։

Տաթևացին իր քարոզությունների մեջ
կարմիր ձուն խորհրդավոր կնկատ ու բո-

լոր աշխարհի հետ կհամեմատե հետեւալ
ձեռվակ ։ Ձուն կնմանի բովանդակ ու իրա-
ւունք Անոր կեղերը կնմանի երմնքին, մաշ-
կը կնմանի օդին, սպիտակուցը լրին ու
զեղինը երկրին։ Գալով հավկիթը կարմիր
ներկով գունավորելու սովորության՝ այս
կնլանակն, թե բոլոր աշխարհ Քրիստոնի
արյունով գնմիցազ ու երբ կարմիր ձուն
ձեռքներիս առնենք, մեր Քրիստության հա-
յար քարոզած կամ աղոթած կըլլանք։

Հեթանոսական ու հրեական սովորու-
թյամբ Հայ ժատաղները պետք էին ան-
պարման որձ ըլլային, կննդանին դուռնու-
առաջ աղ կերցներու սովորությունը տեղի
կունենար նաև հին Հրեաներուն քով։ Նա-
խապես կողմանվեր աարիքու ոչխարը, բայց
հետո գառնուկը նկատվեցավ դուհի Հար-
մարագույն կննդանին։ Հայր ու Հրեան դո-
ւի արյունով կներկեին իրենց սեմերը, ինչ-
պես որ Հրեան իր զոհերն բաժին կհաներ
զետացիներուն, Հայն ալ զոհի բաժին
կուտար իր Հեթանու քուրմերուն ու քրիս-
տոնյա քահանաներուն։

Շատ մը գիծերով Հայկական հին սո-
վորությունները կնմանին Հրեական սովո-
րություններուն։ Հեթանոսությունը շատ
գելարացավ բաժնվիլ Հայտառանեն ու ա-
նոր ինչինչ սովորությունները պահպեցա-
Հայոց մեջ։

Զոհի կենդանին որձ ըլլալի առաջ
պետք է ըլլար սպիտակ ու անոր գլուխը ու
մարմինը պաճունանքներով կդարդարեին։

Լատիններն ալ ունեին իրենց կարգ մը
ինքնաւատուկ սովորությունները։ Օրի-
նակ՝ Սր. Աղնեսի հիշատակին մեջ կծանո-
թանանք, որ պատրազը դեռ չավարտած
երկու ողջ գառնուկներ եկեղեցիու սեղանի
վրա կդրվեին, կօրհնվեին ու անկե վերջ
անոնց բուրդեն կշինվեին իրենց եկեղեցի-
ներուն եմբիփորոնները։

Բարեկենդանի խրախճանքը մնացորդ է
հին աղդերու ունեցած հին հանոյալի սո-
վորություններուն, որոնք առավածներու-
նիիրած հատուկ օրեր ունեին։ Այս օրե-
րուն մեջ կրնային համարձակորեն ամեն
անօտակ զեղիսություններ դորձել։ Այս կար-

դի տոնակատարությունները հին հոռմաեցվոց զատուումնեական» ու Հունաց «գիտնիւսական» շաված տոններն էին: Այս տոնական համբեանները փոխվեցան քրիստոնեության բարեկենդանին:

Մանդակումին Հայոց բարեկենդանը կնկարալրե մեծ պահոց մտնելե առաջ անդի ունեցած բազմանոխ մեղանները բացատրելով, ուր ամեն տեսակ որմրամոլություն, արքմցություն ու չուայրություններ տեղի կունենային, որոնց կերպազանցելին ուրիշ առթիվ եղած բոլոր ժյուս խրախճանքները: Հայոց մեջ բարեկենդանը կտևին անընդհատ երկու շաբաթ:

Պահա պահելու սովորությունը հին Հրեական սովորություն մըն է ու դատավորաց ժամանակեն ի վեր կողոժածվեր Հրեաստանի մեջ:

Հարաթվա երկու օրերը պահա պահելու սովորությունը ևս Հրեական էր: Հրեաները միայն շարաթական երկուշարթին ու հինգարթին պահա կպահեին, մինչ քրիստոնյաները այս օրերը փոխեցին չորեքշաբթին և ուղրաթին, նվիրագործելու համար Հիսուսին մատնության ու մահվան հիշատակները:

Սոմ պահելու սովորությունն ալ առնընված է Սուրբ Գիրքն, Սոմ բառը առնընված է երրայտական ժողով՝ ու ասորական ժողոմ՝ Հոմանիներն: Հրեաները ունեին միօրյա, երեքօրյա ու յոթօրյա ժողով կանոնները:

«Թագառորաց»-ի մեջ (բ) կկարգանք. և վ անոնք Սավուղի համար ու անոր որդույն՝ Հովնաթանի համար եւ Տիրոջը ժողովորդին համար ու Խրայիկ տաճ համար սուզ բանեցին ու լացին ու մինչեւ իրիկուն ժող բոնեցին անոնց առլուզ իյնարաց համար» (Տես Գլ. Ա.):

Եսթերի գրքին մեջ կկարգանք.

Ժննի համար ժող պահեցեք, պիեր ցերեկ երեք օր մի ուսեք ու մի ինեք (Գլ. Դ.):

Ալուաջին թաղակորաց»-ին մեջ պըրված է.

«Եվ անոնց սակորմերը առին ու Հարիսի

մեջ ծառին տակ թաղեցին ու 7 օր եռ պահանձին» (Տես Գլ. Ա.):

Այս վկայությունները ցույց կտան, որ ծոմի գաղափարը Հրեական է: Հայոց մեջ երկար ծոմեր պահելու սովորություն մալ ընդունված էր: Լուսավորիչին համար կպատմվի, որ բոլոր իր կյանքին մեջ քառասուն օրեր ծոմ պահած էր (Ազաթանդեղոս):

10-րդ գարուն ապրող Մովսես անուն ճշնավորի մըն ալ քառասուն օր ծոմ պահելու Հրեատակությունը կընն Ասողիկ:

Երբեմն ալ հայ ժողովուրդը թագավորի մը մեղեքրուն համար պահա կպահեր: Փախտու բյուղանդացին կպատմե, որ երբ Արշակ թագավոր հիմնեց Արշակավան քաղաքը Մեծ ներսես զայն ապաշխարության հորդուց:

Հին Հավատացյալները սովոր էին նաև թշնամյաց Հարձակումներուն դեմ պաշտպանվելու համար երկնից օգնությունը ինդրիլ մասնավոր պահեր պահելով: Առաջ Հրեական սովորություն մըն էր: Մնացորդացին մեջ (Բ) կկարգանք, թե Հրեաներուն Հովասիատ թագավորը ասորոց դարմայան լուրը առնելով բոլոր ժողովուրդին Հրամայեց պահա պահել ու Աստուծմե օգնություն ինդրիլ:

Երբ անդամ մը մարդութները Վրթանես կաթողիկոսին ժամանակ սկսան ասպատակել Հայաստանի մեջ, Հայրապետը հրամայեց պահա պահել ու Աստուծմե օգնություն ինդրիլ:

Վարդանաց ժամանակ ալ եկեղեցի պահեի հրավեր կարդաց ժողովրդյան:

Նվիրական գործերը Հաջողությամբ կարգագրելու համար սովորություն կար նախափառ պահա բրնել: Կիրակոս ճշնավորը Թաղեռու առաքյալին նշխարները գտնելու տենչանցով 30 օր պահա պահեց: ուրիշ առթիվ մալ ամբողջ չորս ամիսներ պահա պահեց նույն նոպատակի համար:

Մեր նախահայրերը, Եղբ անգամ մը փարեցան քրիստոնեության, Զանաղիք եղան անոր բոլոր, կանոնները ու եկեղեցաւ

որևէ բները պահելու, նույնիսկ Հածախ կովելու դրավոր թշնամիներու զեմ:

Երբ անգամ մը Խլանե ՄՆծ իշխանին որդին՝ Ավագը, Թաթար զորապետին բանակը դնաց, իրեն առջի բերին սոսւրց ու անառուրց անասուններու ժիսնը ու ընծուկ ձիու կաթ: Թաթարները պասան մեծ ափորժակով ուտել ու խմել, բայց Ավագ ու իր ընկերները ուտելի հրաժարվեցան, պատասխանելով ով քրիստոնյաները սովոր չեն այսպիսի կերակուրներ ուտելու (Տես Կիրակոս Գանձակեցին):

Հին Հայերը ունեին նաև բազմաթիվ նախապաշտումներ: Կը հիշեմ անոցմեն քանի մը Հաա միայն:

Նթե մեկը զիսրիածով ծառե մը թյաւով մեսներ և կամ ծառի մը վրա կափովելով անձնասպան ըլլար, այդ ծառը մեղագոր չը համարվեր, բայց լավ կրլար, որ ծառը իսկույն կտրվեր, որսկեալի անոր պատուղը ոչոք ուտեր: Բայց եթե նույն ծառին աղմատեն նոր մը բռւսներ, անոր պատուղը կրնար ճաշակելի համարվել¹⁾:

Եթե կիներ կամ քահանաներ որս բըսնեին, այդ որսը պետք էր շան առջե ձեե, որովհետև անոնց ներելի չեր արյուն թափել: Բայց կնոջ մը կամ քահանայի մը որը սացած ձուկը ընդունելի էր, որովհետև ձուկը անարյուն կենդանի մըն էր²⁾:

Հին Հայոց Հեթանոսական շատ մը սովորությունները շարունակվեցան պահվել քրիստոնեության ընթացքին ու ստիպվեցանք ասոնք թվել սղարգապես հեթանոս

հայերու այլաղան սովորություններում վրա լավագույն զաղափարն ունենալու համար:

Անասուններ զոհելու սովորությունը մինչեւ այսօր պահված է Հայերու մոտ: Երբեմն օտար Հեղինակներ կը փափաղին քննադատել Հայկական այս Հեթանոսական սովորության շարունակությունը, մինչդեռ նույն սովորության կը հետեւին եկեղեցիները մինչեւ միջին դար ըստ Կոնիքերի³⁾:


Քրիստոնյա Հույներ, լատիններ, վրացիներ ու ասորիներ, Հար և Նման Հայ աղղին քրիստոնեության առաջին գարերուն մեջ բաղրում անդամներ զոհեր մատուցած են Աստծո: Բայց այս սովորությունը դադրած էր իրենց մեջ միջին դարում ու Հետևյարար մոռացության ենթարկվեցած բոլորտին: Հայաստանյաց Մայր եկեղեցին, ինչպես շատ մը ուրիշ զեղպէրու մեջ ալ հնալանդ սովորություններ պահած է, զոհեր մատուցածուու այս սովորությունը մինչեւ այսօր կը շարունակի դեռ պահել, որմեն կօգտվին աղքատներն ու անկյալները:

Հեթանոսության անհւացումն վերջ քրիստոնեությունը նոր գարապելում մը բացակ Հայաստանի մեջ:

Այս շրջանին ունեցանց մեր այբուրենը, մեր ծաղկյալ զրականությունը ու անբիծ և իդեալապաշտ բարոյական վերելքը, որուն բարձրագույն հանգրվանին կհասնին միայն այն ժողովուրդները, որոնք իրենց մեջ կխոացնեն կրոնքի, Հայրեասիրության ու մտավոր արդյունավոր գարզացման երրյակ սրբությունները:

1) Տես Դավիթ Վարդապետի կանոնները.
2) Նույն:

1) Review de L'Hist. de Religions, 1901.





ԳՈՐԵԳԻՆ ԾՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎԱՓՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏ

Պատիվ և հաճույք մըն է ինձ համար Համառոտաբար Խոսիլ Գարեգին արքեպիսկոպոսի բազմակողմանի աշխատության մեկ տեսակին մասին և ցույց տալ անհուն ծառայությունը զոր յատուցած է իրը Հայ ժանրանկարչության մասնագետ:

Հայ անցյալի և յշակույթի լուսաբանության համար նկարագրղ մատյանները իիսոտ կարևոր դեր մը կը խաղան: Պատերատմներու, արշավանքներու և կրոնական հալածանքներու զոհ գացած են մեր եկեղեցիներն և վանքերներն շատերը, այսպես որ Հանափա ավերակներ կամ կիսափառակ մինչածքներ միակ վկաներն են Հայ ճարուարագետական բարձր արվեստին: Պկան այլև չքեղ արծաթյա, ոսկեղոն և ականակուռ անոթները, կտամիները, որոնք եկեղեցիներու զարդը կը կազմեին: Բայց Հակառակ ավերումներուն և կողոպուտներուն, մեծ թվով ձեռագիրներ բարեբայի տարար կը մոռն տամկալին, և կարելի է Հասուն գաղափար մը կարմել Հայ նկարչության գարգացման ժամկին: Կարելի է որոշել Հայաստանի և Կիլիկիո արքեպատի գոնազանին հոռանքները, Հետեվել Հայ գրիչներու գործողության բոլոր այն կենարուն ներուն մեջ, ուր Հայմական անկախության կործանումնեն վերջ նոր գաղութներ Հասունական տառապահնեցան:

Այս ստեղծագործության ծանոթությունը կը պարտինք մեծավ մասմբ Գարեգին Սրբազնին, որ յուր երկարատև և անխոնը գործումներության ընթացքին մոտեն:

Ժնանած է կմիածնի, Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի ճոխ Հայմականացուները, ինչպես նաև Ֆլորանցի և Ամերիկայի ժա-

տենադարաններու կամ թանգարաններու մեջ գտնվող Հայ յատյանները: Հայաստանի զանազան դպրաները ճամբորդելով տեսած է բոլոր այն ձեռագիրները, որոնք նախորդ պատերազմեն առաջ կը պահպեին վանքերու կամ եկեղեցիներու մեջ: Աւումնական կամ իր հմուտ գեղարվեստական մեջ, որ ծանոթ է ոչ միայն Հայ անցյալին, այլ և մոտակա երկիրներուն արվեստին, ինչպես Բյուզանդական, Սյուրբական, Սասանյան և Սելջուքեան արվեստները և ուսումնասիրած է զանոնք իր պատմական գույց տալով Հիշտակարաններու մեջ գտնվող շահեկան տեղեկությունները և անոնց նշանակությունը եկեղեցական կամ քաղաքական պատմության համար: Աւսումնական կ վերջապես իր գրարկն զեղարդեատասեր, որ դիտե գնահատել և գնահատել տալ մեր գրիչներու և ծաղկողներու արվեստին մասնակոր հայլը:

Վարդապետության առաջին տարիեն սկսյալ իր ուշադրության առարկա նկարագրարդ ձեռագիրները: 1898 թվին Արարատ ամեադրին մեջ կը Հրատարակեր ուսումնաժողովություն մը Ախալցիայի վահանի Նղորավ գյուղի Ամենասրանի ժամկին: Այս ձեռագիրը գրաւծ և ծաղկված է 909 թվին, ի հ. Պոլիս, ուշագրավ է իրը Հայ ժանրանկարչության ամենամեծ օրինակին մին: Կարեվոր է նաև իր ապացույց, որ տառերորդ դարու մկրտքը Հայ արքեպատման կենարության մայրական կաշխատեն Բյուզանդական Կայսերության մայրաքաղաքին մեջ:

Մանրանկարչության նիմիրված իր երկրորդ Հոգվածը՝ Անախնեց յիշառականները կը պարունակե պատմական և գե-

զարգիստական խիստ չահսկան ծանոթություններ։ Այս ասիրիկ Դարեղին Սրբականը ժամանքաւանորսս սկարագրած և ուռաւսասիրած է իշխանուր թիվ 309 ավատարանը, զբարձր և նկարազարդված ը Սպասութիւն 1068 թիվն, Դրբգոր Ակոսուցու կողմանն, որ իր հոր և նորոր հետ ժիստին հետեւած էր Վասպւրականի Սենիքերիմ թագավորին, Դարեղին Սրբազնի ուռաւսասիրության շնորհիվ կը տեսնենք, որ հայրնենի հոգին հեռու իսկ հայ արժիստը կը պահեր իր բնորոշ հանգամբը, օգտվելով հանգերձ հյուզանդական օրինակներն, կը տեսնենք այն նորքը ոճը, որ սկսած էր զարգանալ Հայաստանի մէջ տասնընկերորդ դարուն, և որ նախապատկերն է այն արքեստին, որ պիտի ծաղկի Կիլիկիո մեջ հետեւյալ երկու դարերու ընթացքին։

Այս վերջի տասը տարիներուն մեջ Դարեղին Սրբազնն ժամանավորակես զրադված է տասներեցերորդ դարու ստեղծագործությամբ, որ մեր ժամանակարչական արվեստի ոսկեդարը կրնար նկատվել, նախավանդ կիլիկիո մեջ։ Հեթումյան արքաներու և իշխաններու հովանավորության տակ, գիտնական և զեղարվեստասեր կաթողիկոններու և եպիսկոպոսներու հոգածությամբ ժամանակաշչությունը նոր փայլ կը ստանայ այս շրջանին։ Սկեզառ, Գրադիկ, Հոռմէլլա և Սիս առաջնակարգ կենտրոններ են, ուր հանճարեղ զբիչներ և նը կարիչներ կաշխատեին քով քովի ու կը պատրաստեն շքնդ ժատյաններ, որոնք գլուխ գործոցներ են ոչ միայն Հայ արշեափ, այլ և ընդհանուր Սիշնալարյան արվեստի։ «Կոստանդին Ա. կաթողիկոս որպես Հայ ժամանակարչության մեջ Հովհանավոր» հովանավը Դարեղին Սրբազն մեղ կը ծանոթացնե բոլոր այն ժայանները, որոնք կարպված են կոստանդին Կաթողիկոսի անվան հետ, և կը պարկերացնե Հովհանավի դրբիչներու բարձր արվեստը, ժամանական Թորոս Ռուսինինը, որ այլ դպրոցին փառքն էր։

Տասներեցերորդ դարու Հայաստանի

դրիչներու գործունեությունը նույնքան ուշաղրավ է։ Իր պատմահապիտական աշխատության մեջ, անազրականութ կամ Պուշենու հայոց պատմութեան մեջ, Գարեգին Սրբազնն ցույց կռւուա, որ Սկզբունքու տիրապետութեանն հետո, Վրահայկական իշխանության շրջանին, իսկական վարածնունդ մը կը սկսի Հայաստանի արեւելյան դավանակներուն մեջ։ Այս ընդարձակ աշխատության երկրորդ ժամար, որ տակավին մեր ձեռքը չէ հասած—նվիրված է քաղաքակրթական և հոգեվոր կյանքի նկարության։ Մանրանկարչության ուսումնասիրության համար ժամանակը կարուրություն ունի վերջի գլուխքը, «Գլածը ԲԱՐՁՐ ԴՊՐՈՑԸ ԿԱՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ», որովհետեւ հոս աշխատեցան ճարտար դրիչներ, ինչպիս Թորոս Տարոնեցին։

Հայկական արևելյան դավանակներու վերածնունդի պատմությունը Դարեղին Սրբազնը ուսումնասիրած է նաև կարդ մը հոգվածներու մեջ։ «Մանաստիոս Մանրանը կացիլ և Շոթոռկանց Տուչը, գարձեալ իզնատիոս Հոռոմոսի ժամանակարչի ժամանական հոգվածները կը պատկերացնեն այս վարպետին արվեստը, անոր արևելյան թույլթը, զեղարվեստական կապերը Մասնայան, Միջազետյան և արաբական ավանդներու հետ, նմանություններ հին սուրբիական պատկերագրության հետ։ Այս արևելյան բնույթը, որ Հայաստանի ժամանակարչությունը կը զանազան կիրիկյամ սահղծագործություններն, երևան կուղա ուրիշ ձեռադրիներու մեջ։ Այս շարքին են՝ Թարգմանչաց Ավետարանը, որու ժամին Գարեգին Սրբազն արդին խոսած էր նախնեաց Հիշատակներուն մեջ, Գետաշնի Ավետարանը, ուսումնասիրված Հայքատի դպրոցի մը դրմի դործոց վերնադրով հոգվածին մեջ և ավետարան մը, մասամբ նկարված Արաս դրմի կողմանն, որ այժմ կը գտնվի Շիքակոյի Համալետրանը։

Այս համառոտ տեսությունը հազիկ զարակար մը կրնայ տալ Դարեղին Սրբազնի բարգմարդյուն զործի ժամին։ Պետք

է նաև հիշել Գրչության արվեստը հին հայոց մեջ, թանկաղին քարանգ մը Հայ հանազրության համար, ինչպես նաև դրախոսություններ և երկասիրություններ, որոնք թեև մանրանկարչության արվեստի շեն հատկացված, սակայն շահնկան տեղեկություններ կը պարունակեն շատ մը ձեւապիրներու մասին։ Այս կարդին է, որինակի համար, Հավուց թառի Ամենափրկիչը, ուր քանդակագործության նմուշներու հետ միասին ուսումնասիրված են խաչելության պատկերներ, քաղված զանազան նկարազարդ Ամենառաններ։

Հայ արվեստի բոլոր ուսանողները երախտազիտության խոր պարտք մը ու-

նին Գարեգին Սըրաղանի հանգեպ։ Շնորհիվ իր հրատարակություններուն, ան եղած է երեց առաջնորդը և ողեռորած է զանոնք, և իր աննման բարյացակամությամբ օգնած է անոնց աժեն մնդամ, որ դիմած են իրեն։ Ոչ մեկ զիտնական, ըլլայ Հայ կամ ստար, չունի Գարեգին Սըրաղանի խոր հմտությունը, ոչ մեկը այլքան ծառայություն մատուցած է հայ մանրանկարչության զիտության։ Մեր սրտարուղի իղմն է, որ Մանրանկարչական քարտնդը այն հսկա աշխատանքը որ պատրաստ է երկար տարիներեւ ի վեր, փութով երեան զա, կաղմելով փայլուն սկսակը իր առաջ դործունեության։

(ՀՀ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

ԱՐԹՈՒՐԻ ՑԵՐ-ՆԵՐԾԻ-ԱՑԱԿ



Ա. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ո՞վ է Գրիգոր Նարեկացին, Նարեկի
տաղանդափոր հեղինակը:

Գր. Նարեկացու ժաման կենսադրական
շատ քիչ տեղեկություններ են հասել մեղ:
և եղել է Նարեկա Հռչակավոր վանքի
միաբաններից մեկը: Նրա հայրը Անձնա-
ցյաց Խոսրով Եպիսկոպոսն էր, որը իր ժա-
մանակի ականավոր եկեղեցականներից մե-
կըն էր և որը հայտնի է մեր եկեղեցու ժա-
մակարդությունը բարեկարգելու իր զրա-
վոր մի շարք աշխատություններով: Նրա
«Մեկնութիւն» սրբոյ պատարագին զիրքը
մինչև կերծին ժամանակները եղել է Հռչա-
կոր պաշտոնյանների միակ ուղեցույցը:
Դրչի ամենավերջին Հրատարակությունը
կատարվել է 1860 թ. Ա. Էջմիածնում,
Մատթելոս կաթողիկոսի օրով: Ինքնին
հասկանալի է, թե մանուկ Գրիգորն ինչ-
պիսի աղղոցության առաջ պիտի գտնվեր
ժամկան հասակից ակսած: Հետապայում
հայրը նրան ուղարկում է Նարեկա վանքի
զպրոցը և նա այստեղ է անցնացնում իր
ամբողջ կյանքը: «Յայսմաւուրքը» այսպես
է զրում Գրիգորի մատին: «Անեալ և վար-
ժեալ սրբութեամբ և խմասութեամբ առ
ուստ Անանիայ վարդապետի, առաջնորդի
Նարեկայ վանից ի Ռշտունիս: Այստեղից
պարզ երեսում է, որ Խոսրով Եպիսկոպոսը
իր որդի Գրիգորին մանուկ հասակից
հանձնել է Անանիա Նարեկացու խնամքին:
Գրիգորը Անանիայի եղբոր աղջկա որդին
էր: Աչա թե ինչ է զրում Գր. Նարեկացին
Ապարանից խաչի և Աստվածածնի ներ-
րողների Հրատարականում: «Ես Գրիգոր
յեան վարժապետաց և կրտսեր բանա-
սիրաց, որդի գոտներ եղբոր հօր Անանիայի

Հռչեղարդ և մտավարժ վիլխառիայի և
ըստ վարուց մաքրութեան կրօնից գովե-
լոյ և հոչակելոյ: Նույն այս Հրատարակա-
բանից իմանում ենք, որ նույն Նարեկա
վանքի միաբան է նաև Գրիգորի մեծ եղ-
բայր Հովհաննեսը: «Յիշատակեացնեա
ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտ-
նական է և հանձարեղ իմաստասէր քան
զիս առաւել յամենայնին: Երկրորդ Հրա-
տակությունը, որ անում է Գրիգորը եղբոր
մատին, զրկած է Հռչակավոր Շղբերգու-
թեանց վերջում: «Ես Գրիգոր կրօնաւոր
քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր
վարժապետաց, զրբակցութեամբ եղբօր
իմոյ ընտրելոյ Ցովաննէս կոչեցելոյ Նա-
րեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի
վանականի, որք իրքն զիմ ժարմին բանա-
կան ի յերկուց առ մի կերպարան շինելոյ
զիմաց կենցարակարուելով, ոչ միայն հա-
րադարուք: այլ և միաշունչ, միակրօնչ,
համազատիւք, զուգահաւանչ, ի քարոյց
աշաց առ միենոյն շաւիդ խորհրդոց տե-
սեազգը: Այս Հրատակությունից պարզու-
թեն երեսում է երկու եղբայրների լիակա-
տար և միանման տեսակետներն ու խոհերը
կյանքի և կրոնի վրա, որովհետև եղբայր-
ների չորս աչքերը միենույն շավիդն ու
միենուի խորհուրդներն են տեսնում:

Նարեկացի Եղբայրների ուսուցիչն ու
դաստիարակը՝ Անանիա Նարեկացին եղել
է Համբավակավոր և իմաստ պատրաստված
մարդ: Նա թողել է Ա. Պրելին վերաբերող
մի շարք ճառեր ու մեկնություններ: Պայ-
քարել է Թոնդրակեցիների դեմ և եղել է
իր ժամանակի ամենաականավոր եկեղեցա-
կանը: Հասկանալի է, թե ինչպիսի աղղե-

ցուժյուն պիտի թողները նա Նարեկացի սղբայրների վրա:

Իս և ըս և ո բտել է ծնվել Նարեկացին, հայուսի չէ: Ասալանը նրա ծնունդը սշասակում է սօն թվին, Մանուկ Արեգյանը՝ 940 թ., իսկ ամենաուշը՝ 955 թվին: Այս բարբեր ճնշտը դրություններ են միայն և պատմ են Ալղբարդութիւնը ավարտելու, այսինքն 1001 կամ 1002 թվականից, երբ արդեն Ալղբարդութիւնը ավարտված էր և պատրաստ: Սվ որովհետեւ Շմղբերդությամ մէջ Նարեկացին իր ճամփն հիշաւակում է, թե և իր հասից յամ ծերությամ և այլն, ճնշտաբում են, թե այդ նախադասությունը գրելիս նա Հավանորեն պիտի լիներ նշ-նշ տարեկան: Այս հաշվով հետ գնալով որպշում են նրա ծննդյան թվականը: Այսպիսի Հաշովներն ու ենթադրությունները հիմք չեն կարող ծառամք ասելու, թե նա ե՞րբ է ծնվել:

Սակայն 877 թվականին նա արդեն հոչակվել էր որպես գիտնական, որովհետեւ այդ նույն ժամանակի Գուրգեն Արծրունին՝ Անձնացյաց թագավորը խնդրում է Նարեկացուն գրել «Երգ երգին» մեկ նույնը:

Դրանից ընդամենը 6—7 տարի հետո, 984 թվականին, Անեցին գրում է. «Փայտէր իրեն զարեկակն իմաստութեամբ ու առաքինութեամբ ուուրբ այրն Աստուծոյ Գրիգոր Նարեկացի»:

Որ, հիբասի, Նարեկացի հորայրներն իրենց իմաստությում և առաջադիմությում մեծ փառքի են հասնում, երեսում է նաև նրանից, որ Անանիա Նարեկացու մահից հետո վանքի վաճառայր է ընտրվում Հովհաննես Նարեկացին: Լամբրոնացին Նարեկացուն այսպիսի բնորոշում է առաջին՝ «Աստուծածանորի և յոդոնց գերազանց հրեշտակն ի մարմնի»:

Այսպիսի գնահատականը Նարեկացին ստանում է իր բարեպաշտությամբ, նվիրվածությամբ և մտքի այն հակայական պաշարով, որ նա այնքան առատորեն և որուարուի, այնքան անկեղծորեն և հայատուի պատմուականը է իր երկերում: Նրա ստեղծա-

դործական ուժը և աւագոր է և անհատաւում, նրա որպատճենությունը և ուժեղ է, և խորտակը: Նրա բառաքը և ասկեղծ է, և զարսարդիւ, իսկ նրա հավատը աւահանան է և անուու, նրա երկյուղածությունը ու ողբերը կազմացուցիչ են, բոլորով և միաժամանակ միփլարող, հուսաղորդ և քաջալիքող: Նրա ամեն մի տողի մեջ աղօթող մարդը տեսնում է իրեն, գտնում այսուղի իր ներքինը: «Նարեկը աղոթող և հավատացյալ մարդու հոգու վերը է: Նարեկացու փառքը չեր կարող չտեսնել թշնամիներ, և ընական է, որ այդ թշնամինները պիտի ամենից առաջ դուրս գային հոգեւոր դասից:

Նարեկացու գեմ, որպես հայ եկեղեցու աղանդական սկզբունքներից շեղվողի, դատ են մկում նրա հակառակորդները և նրան հալածում որպես հերձակածողի, որպես եկեղեցին պառակտողի: Այդ այսպես է նկարագրվում «Յայսմաւուրք»ի մեջ: «Ժողովների ի մի վայր եղիսկոպոսունք և իշխանք, աղանձուոց և տանուածքոք, յղեալ կոչեցին Գրիգոր Նարեկացին առ ի դասել և յանդիմանել Հրապարակու և աշորել զնա պատուհամի որպէս զերծուածուող» (էջ 394): Սակայն ոչ այս դասի տեղն է հայունի և ոչ էլ զասող հոգեւորականները և իշխանները: Արանից պիտի գալ այն եղրագացության, որ փորձեր են եղել ստեղծելու Նարեկացու զեմ ամբաւատանություններ, բայց գրանք չեն հաջողել: «Յայսմաւուրք» համագրությունը Նարեկացու կողմն է, քանի որ այսուղի դրված է: «Արովհետեւ նա ամենայն փութով աշխատում էր ուղղել եկեղեցում ախրող խանզարված կարգը, ուստի մի քանի նախանձող չարախուսեցին նրա մասին նպիսկոպոսների և իշխանների ժողով և այդ նշանակի վարդապետին կոչեցին «Ճայթ և հերձուածող»:

Այնուհետև «Յայսմաւուրք» պատմում է, թե ինչպես պատմիրավներ են ուղարկվում Նարեկացուն բերելու: Նա եկողներին սիրով ընդունում է և հրամիրում է սեղանի նստել: Նրանց առաջ դը-

նում է տառպակած աղավնիները և կողները հրաժարվում են միս ուտելուց, հայտնելով որ օրն ուրբաթ է: Նարեկացին ներողություն է ինքրում և առաջարկում է իր հյուրերին աղոթել, որ աղավնիները թոշեն: Հյուրերը հրաժարվում են: Այդ միջնորդին նարեկացին խաչակնքում է աւդանը և աղավնիները թե են առանում ու թոշում:

Այս ավանդությունը ստեղծագործության նյութ է դարձել Հովհաննես Թիկուրանցին և նկարագրել իրաւությունը կողմերով:

Գատի կանչողները, բնականաբար, ակնածում են և լուսթյամբ հեռանում, իսկ պատավարությունը տեղի չի ունենում:

Որ հիրավի նարեկացին նախանձորդներ և թշնամիներ ունեցել է, այդ նշված է նրա մեղքերութեան մեջ: Նա 29 քանի մեջ գրում է: «Յիշե՛ա զոր ի մարդկացին աղն է զթշնամիս մեր ի բարի: Մի՛ բարկացես նոցա վասն իմ: Ներեա՝ յանցանց նոցան և այլն: Նշանակալից են թշնամիների վերաբերյալ հետելալ բառերը: Անբարապատ, ոմանք առ մեղ մնասակարագոյնք սակաւուք, թերեւս և յիրաւի բամբասելոց... մի՛ սաստակեցիս դիմսն խածանողն»:

Նարեկացու մահվան ճիշտ թվականը նույնակեն հայունի չէ: Մեր պատմաբանները այդ թվականը նույնակեն որոշում են ենթադրություններով: Ըստ Զամշյանի նույնամաս պիտի լինի 1003 թվին, իսկ ըստ Գարբհանելյանի՝ 1011 թ., ինչպես Օրմանյան արքեպիսկոպոսը, նույնակեն և երջանկաւիշատակ Մանուկ Աբեղյանը լուսթյամբ են անցնում այս հարցի վրայով:

Մեր ժողովուրդն իր սիրեցյալ գալակին անմահ է համարում: Ըստ ժողովրդական ավանդության նարեկացին մտել է մի քարայր ճգնելու: Երկար սպասելուց հետո, մարդիկ տեսնում են, որ նարեկացին քարայրից դուրս չի գալիս: Մտնուած են քարայրը և տեսնում, որ այնուղի մարդ

չկա: Հավատացյալ ժողովրդի հայացքով արդպիսի սուրբ անձնավորությունը չէր կարող մեռնել, նա կարող էր միայն երկինք բարձրանալ:

Նարեկացին մեր եկեղեցու կողմից զամփել է ուրբերի կուրքը:

Նարեկացու գրական փառքը կազմում են նրա «Աղքերգութիւնը» և տաղերը: Այստեղ նարեկացին հանդես է կամիս ոչ միայն որպես հանճարեական գյուղացիությունը և հոգեվոր կյանքի հետ կապված հակասությունները մերկացնողությամբ, այլ և ուժեղ տրամարան, հմուտ ճարտառան և զգայուն ու խոհուն բանաստեղծ: Բանաստեղծական ավյունը, ճշմարիտ և անկեղծ խոռքը, Աստծու հետ հստակորեն, համարձակ և նույնիսկ հանդուպն կերպով դատելլ, մարդկային թշնամությունը և բարյական անանկությունը հրապարակ բերելն ու զատապարտելլ, Գերազույնի ողորմածությանն ու մեծառոգությանն ապավինելլ կազմում են նրա կրոնական քերթվածի հիմնաքարը: Նարեկացու մզումը բարձրացնելու մարզուն, զավատի և հույսի պատվանդանի վրա զնելու նրան և նրա միտքն Ամենակատարյալի բարոյական սկզբունքներով բոցավառելլ կազմում են նարեկացու գըքի, նրա քնարական քերթվածի բովանդակ է ությունը: Նա Ասաուծոյ առաջ ջերմ, իրոնարև աղոթող է, հավատի կառարյալ մարմնացում, տիրոջը նվիրված հառաչանք, մորթոք ու աղերս, սակայն և ըմբոստ, ողայքարող, պահանջող, պարտապրող և ակնկալող: Հափշշտակված հայիտնական կյանքի իշեալով, ողեջնչված անմահության գաղափարով, նա պահանջում է հայր Աստծուց խոստացված անմահությունն ու արքայությունը: Նա բողոքում է, որ մարդի ստեղծվել է թերի ու անկատար, որ մարդն ստեղծվել է միայն ըլսու պատկերի գուման նրան չի պարզել աստվածային ստեղծագործ ուժը: Մարդն ստեղծվելով միայն ըլսու պատկերի և ոչ ըստ «էության» Աստծուցու, ստուգել է այնպիսի հատկություն-

ներով, որ նա պետք է չեղի իր ճշմարիտ ընթացքից և զառնա հանցավոր: Նարեկացին այսպես կատելով պահանջում է, որ Աստված մարդուն հասցնի իր բարոյական կատարելության: Այս է կաղմում աղոթող նարեկացու ողբի հիմնական սկզբունքը: Հիրավի, իրական ողբերգություն է ապրում մեծահանձար բանաստեղծը, նա հավատում է Աստծուն և հոգու անժահության գաղափարին, ապային նա տեսնում է նաև մարդուն իր հոգեկան ախտերով, որոնք չեն կարող նրան դարձնել անժահություն: Անմաշին հասնելու համար մարդուն անհրաժեշտ է բարոյական, անբափր կյանք, մարդուր կենցաղ, ասաքինի վարք, Հոգու ու մտքի կատարելություն, իսկ մարդն ըստ Նարեկացու զուրկ է այդ բոլորից: Այսուղից սկսվում է հենց այն հակասությունը, որ կա մարդու կյանքի ու ձգուումների և Աստծո պահանջների միջև: Այսուղից էլ սկսվում է Նարեկացու ողբերգությունը, նրա, հոգու արագմագիան: Ասկայն ի՞նչպես հաշտեցնել հակասության այս երկու եայրերը: Եվ Նարեկացին գունում է հակասությունը վերացնելու ելքը: Քանի որ անհընար է մարդու էությունը չոք ձևակերպության ենթարկել, հետևապես մարդը պարտավոր է հաշտվել իրականության հետ, սակայն միաժամանակ նա պետք է ձգորի կատարելության և Աստծու ողբի վնելու կոչման: Դրա համար մարդը պետք է վարի աստվածամբ կյանք: Նա պիտի հրաժարվի աշխարհիկ կյանքի հանույներից, խեղդի իր մեջ զարթնող մարդկայինը, ապրի հոգերոր կյանքով և չնչի միայն նրանով: Այդ դեպքում Աստված կների նրան և նա կարժանանա համբառենական անմահական կյանքին:

Աղոթող և զիջացող մարդուն ներելու հանգամանքը Նարեկացին նախ մեկնում է նրանով, որ Աստված բարի է, դժած և ողորմած, մեծառողի և բարերար: Ներման պայմանները բղխում են հենց նրա էությունից: Երկրորդ՝ որ մարդուն նա ստեղծել է ըստ պատկերի իրում»: Եվ մարդուն ստեղծելով անկասար, Աստված պետք

է կատարելության հասցնի նրան: Իսկ մարդն այդ գիտակցելով պարտավոր է զինվել հոգեկան առաջինություններով, նմանվել Աստծուն, հասնել կատարելության: Իր աստվածաբանական այս տեսությունը երկուստեք զուգակցելով պարտավորածանաչության՝ Երկյակ զբություն է ստեղծում, Աստծուն պարտավորեցնում է ներել, զթալ և ողորմիլ, մարդուն պարտազրում է խոստովանել, աղոթել և ներուան խնդրել:

Հափշտակված անանցանելի և հավիտինական կյանքի իդեալով, որին մարդը պիտի արժանանա մահից հետո, Նարեկացին ընկնում է կատարել ինքնամոռացումի և հափշտակվության մեջ հանուն այդ կյանքի, որի հանդեպ աշխարհը, աշխարհիկ կյանքը իր հաճույքներով կորցնում է իր արժեքը: Ճիշտ է, Նարեկացին բացարձակ ճպություն չի քարոզում և չի պահանջում, սակայն բարեպաշտ և ծերմեռանդ հավատացյալ ապաշխարող քրիստոնյա լինելը նա իր ստեղծագործության մեջ դնում է որպես հիմնական ինքնիր:

Նարեկացին իր ստեղծագործությունն անվանում է «Ընդութեալութիւն»: Այդ ողբերգությունը, որ մի խորոց սրտին խոսք է ուղղված Աստծուն, մկանում է այսպիս: «Այս հառաջանաց հեծության սրտի, ողբոց աղաղակ ժեզ վերընծայեմ տեսողդ զարդնեաց: Եվ մասուցեալ, եղեալ ի հուրթակնեան, անձին տոչորժան, զպտուղը միջի ենեներոյ սասամեալ մասցու, բուրգառակ կամաց առաջել առ քեզ: Այլ հոտութեացին, հայեացին, զթած, քան ի պատարագն ողորդապուղը մատուցեալ ծիոյն բարդութեան: Ընկալ զսակաւամնեայ բանից յօդուած քեզ ի հանութիւն և մի ի բարկութիւն: Ելցէ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս վաղվաղակի ժամանել առ քեզ կամտորական նուէր բանական զուհակիզեալ զօրութեամբ ճարպոյ, որ իրան է սբարարութիւն: Եւ ի դմելի իմ ընդ ժեզ դառ խառնեալ աղերսի, Հոգոր, մի իբրև զհամբար ծումն մեռաց ամբարշտեալ Յակոբու,

բազոքելոյն Եսայեայ և զանիբուռութիւն
Բարելոնի տաղակալի քեզ երևոցիւ (Բան
աւաշըն Ա.) :

Սրանք Նարեկացու առաջին խոսքելոն
են ուղղված Ասածուն, նրա հետազա սաեղ-
ծակործությունների նախարանը կամ Աս-
արծու հետ խսովելիք նյութերի ծրագիրն
ու առփոփումը :

Չպետք է աչքաթող անել այդ, որ նա
Ասածուն ուղղած իր առաջին միմանչները
համարում է հեծություն և հառաշանք,
ոզր և աղաղակ, որ ցույց է աալիս, թե
նա ունի հոգեկան վիշա ու անհանք, որ
նա վարակված է ներքին զգացումների ինչ
որ կակծեցուցիչ, խայթող, նրա ողջ կու-
թյանն ալեկոծող ահսկի վշառվ և որ այդ
զորավոր և մշտական վիշտը տատանում է
նաև նրա միտքը, խլում նրա հողու և
մտքի հավասարակցությունը: Սակայն
ինչո՞ւ է արդպես վերարերվում: Նա ցան-
կանում է, որ զաղանեաց տեսնողը չոշա-
փելիօրեն միանա իր հետ, զգա, աեսնի
տանջանքների ամբողջությունը, նրա ահա-
վորությունը: «Այլ հուսառեսցիս, հա-
յեսցիս ի պատարացն ըոլորապուալ ծր-
խոյն բարդութեան»: Այս, Աստված
պիտի լրայուն հակ, կենցանի մարդ
դառնա, ինչուիսին է Նարեկացին, և
թափանցի նրա բարդ տանջանքների էու-
թյան խորքերը: Եվ քանի որ Նարեկացու
ստեղծագործության հոգվածաշարքը կադ-
մում է նրա ներքինի լրիվ արտահայտու-
թյունը, որ այն Նարեկացին պատկերում
և նկարագրում է ախալես, ինչպես որ կա,
ուստի պարտավորվում է խոնդրել Աստվ-
ծուն, որ համությամբ ընդունի իր ասած-
ները և ոչ բարկությամբ: Որովհետեւ այն
ինչ պատմում է Նարեկացին, րղում է
նրա սրոտի խսքերից: «Ելցէ ի խորոց
աստի խորեղակիր սենեկիս (այսինքն
սրտից), վաղվաղակի ժամանել առ քեզ
կամաւորական նուէր բանական զուկիս ող-
ջակիղեալ զօրութեամբ ճարագոյ, որ յիսն
է պարագառութիւն»: Պարարտ ճարագի զո-
րությունը Նարեկացու ներքին զգացում:

Ներն են: Բանաստեղծը պատկերավոր մե-
զով և խոսում, որպասզի ընթերցազի հա-
մար պարզ և չոշափելի զարձնի իր զգա-
ցումնեցը: Իր սիրուղ համարում է «Առ-
շըրշակիր սեսյակ», որ իվ և անհուն զգա-
ցումներով, իրեն համարում է բնական
զու: զուը խարույկի վրա բոցավակում է
և նրա ծալին ու օսնեազը բարձրանում են
առ Աստված, որ նա հստուի տեսնի և մար-
զու տանջանքները լրակատար կերպով
ըմբռնի ու զգա:

Նարեկացու կությունը, նրա միտքն
ու հոգին, նրա անհուն զգացումներն ու
խոհերը, նրա աշեկոծ և փրփրազեղ հույ-
զերն ու ներշնչումնեցը ամփոփված են
նրա սղբերգության մատյանում: Այս
մատյանը հոգեվոր երգերի, բանաստեղ-
ծությունների մի հակա շղթա է: Նրա յու-
րաքանչյուր տունն ունի իրեն հատուկ բույ-
րը, բուրատինակ գեղեցկությունն ու վե-
հությունը: Նարեկացին զարմանալի ճկու-
նությամբ հոգեկան ուժի կախարդիչ ուժ-
զությամբ և կարողությամբ կարողա-
նում է հոգիոր կյանքի և մարդկային
կյանքի հակասությունները, նրա բարդ կըն-
ձիռները լուծել հօգուտ հավերժական ճշ-
մարտության այս է հօգուտ մարդկային
առաջադիմության, հօգուտ մարդու կա-
տարելության: Ահա նրա ողջ պատմական
և իրական արժեքը, ահա նրա մշտենջենա-
կան լինելու զաղանիքը:

Չնայիլով Նարեկացին մանուկ հասա-
կից մինչեւ յուր ժահը փակվել է զանքում
և կրել հիացմունք առաջացնող տքնու-
թյուն, որպես հսկող, այնուամենացնիվ
նա լայն ծանրություն: ունի աշխարհիկ
կյանքի բոլոր կողմերի հետ: Նա իր ստեղ-
ծակործության մեջ չըշափում է այս կող-
մերը, դիտում և քննադատության ենթար-
կում: Զկա մարդկային հոգու ու մաքի,
որոտի ու զգացումների մի խորհ, որ ան-
ծանսթ լինի նրան:

Իր ողբերգության մատյանում Նարե-
կացին պարզունակ զնում է մարդու ինքնա-
ւանանշության, ինչնաշնադատության

խնդիրը։ Մարդը իր բարոյական կյանքի սկզբունքները իւղը պիտի մշակի և դորժադրի, իսկ այդ սկզբունքները իւղանակատարելության հասնելու անհրաժեշտ սկզբունքներն են։ Ծվ այդ նա պիտի անի և իրադրժի շնորհիվ այն իւղատության ու ստցի, այն հանձնարի, որ տրված է նրան։

Նարեկացին մարտնչում է հենց մարդու կատարելության համար։

Արպեսդի առհասարակ լրիվ գաղափար կազմենք մարդու կատարելության համար մարտնչող նարեկացու ներքին զգացումների մասին, անհրաժեշտ է կանգ առնել հետեւալ պարբերության վրա։ «Ձի եթէ զի՞մ մի ծովուց ի յորսիութիւն դեղոյ յեղեղեցից, և զդաշոս առպարիոք բազմօք սահմանեալ ի տարածումն լայնութեան քարտնենի չափեցից և զպուրակս յոցուց անտառաց շամբից եղեգանց ի հասուածություննեան գրչաց կազմեցից, և ոչ զի՞մ մի ի բարդելոցն առօրինութեանց զօրնցից ընդ զրով սահմանի գրաւել։ Նա՝ զի թէ վմայրս իիրանանու ի մի լուծ կըուց զօդեցից, և կամ զիառն Արարատեան փ կէտ ամբարձման նժարի միոյ արգարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնր հարթութեածք համադուկակցելը (Բան իններորդ, Ա.)։

Այնուամենայնիվ հետաքրքրականն այն է, թե նարեկացին ինչո՞ւ է արագիօի ահութի չափազանցությունների դիմում, արգոք ի՞նչ խմասուով է դիմում այս հաւագոր և սոսկալի չափազանցության, ինչո՞ւ է մարդուն այս աստիճանի նսեմացնում։ Այդ մեզ համար ինքնին համեմակալի կլլնի, եթե վերէիշենք նարեկացու հիմնական մտադրությունը, նրա երկի էոթյունն ու կենտրոն կազմող հաստապ խնդիրը։

Նա համեմատության է դնում մարդուն Աստծու հետ, նա ցանկանում է մարդուն աստվածաշնել, նրան հասցնել աստվածային կատարելության՝ մարդու մեջ ամփոփելով այն բոլոր առաջինությունները, այն ողջ բարոյականը, որ վերաբրում է Աստծուն։ Այսպիսի նպաստակարքում տեսնելով պիտի ընդունել, որ նարեկացու հա-

մեմատությունը ճիշտ է և չափազանցության ինդիրն ինքնին վերացած, եվ հիրավի, եթե մարդը թոթափի նարեկացու նըշած արատները և դառնա առաջինի, պարզ է, որ նա հասած կլինի կատարելու թյան, այսինքն կատալածանայ։ Ահա թե ի՞նչպես է զնում խնդիրը նարեկացին և ի՞նչպես պիտի հասկանալ նրան։

Իր աղոթքներում գնելով առովկածանալու խնդիրը նարեկացին մարդու առաջ բարոյական կատարելության հասնելու անընդհատ վերելքներ է բաց անում և մարդուն գնում մարանչողի զերում։ Բավկական չէ հավատալը միայն, հավատալով և տեղում հանգիստ նստելով ոչինչ ձեռք չես բերի, — գրում է նարեկացին, — այլ ակտոք է և հավատալ, և՛ գործել, և՛ սիրել, և՛ պայքարել սիրո պատունները քաղելու և վայելիլու համար, Դրա համար հարկադրութիւնը ինչնամփոփնել, հավաքել ներքին ուժերը, հոգնոր ուղղությամբ լարել և ձեռք բերել պահանջվող առաջինությունները։ Այս առաջինությունները նույնպես երբեք թիւնք իրենց չեն ստեղծվում և չեն տըրփում մարդուն։ Մարդն այն ձեռք պիտի բերի համապատասխան կենցաղով և պայքարով։ Այս ձեռով միայն մարդը կարող է կատարելության հասնել, մոտենալ Աստծուն և աստվածանալ։ Այս կապակցությամբ նարեկացին զրում է։

«Իսկ ես ոչ միայն կարողամ, այլ նաի հաւատամ մեծութեան նորին և ոչ եթէ վասն պարզեցաց նորա մատուցեալ յոդոք դեղերիմ, այլ եբբ զկենդանութիւն իսկադիմ, և զենչոյ տուրեւանութիւն հաւատամի, առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն, զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերեմ։ Ոչ ի տուրոն, այլ ի տուրողն յառէտ կարօւիմ։ ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառութեալն է համբուլուկնի, և ոչ կենացն փափաղանօք, այլ կենարարին յիշառակաւն միշտ ճենճերիմ, ոչ զայելիցն տարվանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք յերիկամանց աստի կականիմ։ ոչ զհմեղիստն խնդրեմ, այլ զհանգուցին զերեսս ազակեմ։ ոչ հար-

նարանին իննեցիւք, այլ վեսային անձկութեամբ մաշիմ, ի ձեռն որոյ զօրութեան վաստավէս ակնկալութեամբ վերապրեցեալ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ ի կալուդին ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն աեսանել յողորմութիւն և ի գթութիւն և յերկնիցն ժամանակութիւն, թէպէտ և յոյժ եմ տարագրելին:

Ինչպես տեսնում ենք, Կայա տաղերի մեջ Նարեկացին ամփոփում է իր վառ, անսասան և համաժարած հավատն ու սերը առ Աստված: Այդ հավատն անսահմանափակ է և բղխում է նրա սրոփի խորքից, նրա ողջ էությունից: Այս խնդրում նա միացնում է իր միտքն ու Հոգին, իր կամքըն ու մտածողությունը և սիրոյ ու նըմիրվածության իհակատար զգացումներով փարվում է Աստծուն, միանում նրա հետ:

Աստվածանալու տեսնչը Նարեկացու մեջ անգուսուպ է ու աննաւանջ, քանի որ այդ է կազմում նրա Շնորհրդութեան էությունը, նրա աղոթքների մեջ հիմնականը: Հենց այդ իմաստով նա գրում է: «Ձեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ ընկալ և մասո՛ քաւեալ և որբեալ զիս զամենապարտրու Բանդ կենդանի՝ առ հաւատարապատիւ քո Հոգի, զի քե վերտանի հաշտեալ յիս դարձցի: Եւ ի ձեռն քո իւրովն կամօք մաքուր նուիթեալ գորեղն աշխութեամբ զիս Հօր ընծայեալ անդէն առ նմին նովիմք միշտ, ի քեզ չնչոյս ողջունիւ կասրեալ ընդ չնորդիլ. ի ֆեղ միանալ անդամնաշնորհությունը (Բան քանակությունը, Գ.): Նա խնդրում է իրեն ընդունել, քավել, սրբել իր Հոգով և անրաժանելիորեն միացնել յուր հետ. «Ի քեզ միանալ անրաժանելիի»:

Գիտակցելով աստվածային ուժի գոյությունը մարդու ներքին աշխարհում, յմոռանալով մարդու մերժավորությունը Աստծու հետ և նրան միանալու վերջնական նպատակը, որով և վերջակետի պիտի հանդի յուր ողբերգությունը, Նարեկացին զայիս է այն եզրակացության, որ մարդկային հանցանքները ինչպես որ հեշտությամբ են ծննդում, նույնքան և հեշտությամբ են վե-

րացվում, եթե մարդը սալրում է ներքին պայքար, ինքնաշնաղատություն և եթե նա կարողանում է ինքնամփոփել յուր ուժերը և կատարելության ձղտել: Այս բերումով նա զրում է հետեւյալ եղրափակիչ տղերը և Քանդի զայն ամենայն գունդը չարութեան բանապարկութիւն զօրաց սակաւ: Ճի արտօսր կաթուածոց աշաց, իրը զճճիս զեռումս բարձրուածնիս խղայթից Երկրի տկար խլրտմանց անկեալ վերայ ծորումն ձիթոյ կտա դոյլն գեղ ինչ սառուակչական, ցամացցուցանէ. և զոյզն մի հառաջումն սրտի հեծութեան եկալ ի յոդւոյ: իրը զնչումն հարաւային ջերմութեան խառնեալ յարեւու, զաւուամանեաց սաստկութիւն Հալէ: քանդի ըստ միումդ նմանութեամբ հեշտածինք են, ըստ միւսումդ դիմադրութեան զիւրամերք (Բան յաթերորդ, Ա.):

Այսպիսով ուրեմն Նարեկացին համոզված է, որ սակաւ մի արտօսր կաթուածոց աշաց, գոյուն գեղ ինչ սատակչական կամ գոյուն մի հառաջումն սրտի հեծութեան եկալ ի յոդւոյ բավական են մարդուն սպատելու: Նարեկացին այս եղանակով բաց է անում Աստծուն մոտենալու, կատարելության հանելու ճանապարհը և վերցնում այդ ճանապարհի վերա զտնը վող արգելքները:

Նարեկացու քննադատող միտքը արթուն է և զորավոր, նա չի խնայում մարդուն Աստծու վերաբերմանը իր ունեցած անպարտանանաշության և հանգնության մեջ, նույնպես չի խնայում Աստծուն մարդու վերաբերմանը յուշաբերած վերաբերմունքի մեջ, Բացատրելով Աստծուն միանալու հարավորություններն ու պայմանները բարոյական ինքնաշումբան և ինքնամփոփման միջոցով նա չի ներում մարդու զոռողությունը, ամրարտավանությունը, աղիտությունը և վայրենությունը ու դրում է: Են մէջ գիտութեանս անպատշաճական գնացի, զարտուղի օխայեալ դժբնակապէս և այս է ամենային ամենայն իրօք մեզանչելն: Ըստ սահման կըութեան կամաց քոյ արտաքս վազեցի, որ է հաւատին կերպարան բասիր անօրէնութեան:

Անգիտիցն չափոց չարութեան զործոց լրու-
մըն յաճախութեան նիւթեցի, որ է ճշգրիտ
պատկեր յանցաւութեան: Սպառնացար և
ոչ զարհութեցայ: արդահատեցեր և ոչ եր-
բէք լուայ, որ է ապստամբութեան յայա-
նի նշանակած (Բան քսաներորդ, Ա.):

Ինչպիսի անաշառությամբ դատապար-
տում է մարդուն, նույնպիսի անկեղծու-
թյամբ քննադատում է նաև Աստծուն: Աւա
այդ առղերը քիչեղ արդարութիւն հանդեր-
ձեցեր, բարերար, և ինձ ամօթ և պատ-
կառամս պատրաստեցեր, քեզ փառս վա-
յելչականս, և ինձ նախատինս՝ յարժարա-
ւորա, քեզ քաղցրութեան յիշատակ և ինձ
մաղձ քացախեալ ի կատարածի, քեզ բարե-
րանութիւն անլուկի և ինձ մայսս ողբոց
աղաղակի, քեզ օրէնութիւնս երկոց ինձիւկի
և ինձ մերժումն տարագրութեան, և քեզ
իրաւունս բարմարժանիս և ինձ պատաս-
խանատուութիւնս ամենավարանս, և քեզ
բարձրութիւնս անճառ գովեսալից, և ինձ
զամին լիզելոյ պատիժ ձաղանաց (Բան
քսաներորդ, Ա.):

Ինքնին հասկանալի է հակադրությու-
նը: Հակադրվելու այս պարագայից հենց
րդիսում է և նրա խիստ քննադատությունը: Այս
դադիս է մարդուն քըստ էությանց լըս
տեղծելու, այլ միայն քըստ պատկերից ըս-
տեղծելու սկզբունքից: Այս քննադատու-
թյունը Նարեկացին հասցնում է իր զա-
ղաթնակեսին, երբ նա զիտակցում է իր
անկատարելությունը: «Արդ, յիշեա զըս-
մեծութիւնդ, տէ՛ր, նայեցեալ ի յիմա ա-
նարդութիւն: և բնդ ինձրեյս իմ ի քին
բարի իմոցն ատեյեաց, և գու առ քոյս
ըստ քում մեծութեանդ անճառերին Հրաշա-
գործեսցես: Մի՛ սատօակեսցիս զիմսն խա-
ծանողան, այլ փոփոխնոցն խլեալ զիմո-
տանս բարս երկրառու, զրարիսն արմա-
տաշուսցես և յիս և ի նոսին» (Բան ութ-
ուներորդ, Ա.):

Խնդրելով իր թշնամիներին բարիք ա-
նել, իրեն խայթողներին ու խածոռներին
չսատակեցնել, այլ փոխել, կարծեք թե դր-
բանով պարտավորեցնում է Աստծուն նույն-
պես մարդու հանդեպ տոհասարակ ները-

զամիտ լինել: Եվ, արդարեւ, եթե մարդն
այդպես է իր ատելիների նկատմամբ, ապա
ի՞նչպես պետք է լինի Աստված իր որդի-
ների նկատմամբ, որոնց ինքն է կյանքի
կոչել: Այս նախաղկուշացումն անելուց հե-
տո Նարեկացին շարունակում է: «Մանա-
ւանդ զի գու լոյս ես և յոյս և ես խաւար
և յիմար, դու իսկութեամբ բարի և գովե-
լի, և ես համայնիւն չար, ապիկար, գու
տէր ստորիցս և երկնի, և ես ամիշխան
շնչոյս և եպույս, գու բարձրեալ ի կա-
րեաց զատեալ, և ես տաժանաւոր և վատե-
գաւոր, դու ի վեր քան զկիրս Երկրիս, և
ես կաւ ամարգութեան, գարշութեան, գու
ըստ մարդարէին մեաս յաւիտեան յամբաւ
բարձրութեան և ես միշտ կարծիմ քուն
Ասրիմ բանին: ի քեզ ոչ է մբութիւն կամ
Անթգութիւն և ես բաւանդակն իսկ թշնմ,
որ գաւանդն իմ ոչ պահիցեմ» (Բան ութ-
ուներորդ, Բ.):

Ցողոքելով այս ահապոր տարբերու-
թյան դեմ, Նարեկացին արդար ցասումով
համակված բացականչում է: «Հան զիս ի
բանտէս, արձակես ի կապանացս, զի՞րծ
ի չղթայէս, փրկեալ ի խեղդմանէս, աղա-
տեալ ի տաղնասրէս, քակտեալ ի յերկա-
թիցս, լո՛յծ ի պաշարմանցս արտաքսեալ
յերկմտութեանցս, սփոփէալ ի տիրու-
թեանցս, Հանգո՛ ի նեղութեանցս, փա-
րատեալ ի վշտացս, Հանդարտեալ ի
խոսկութեանցս, ապագինեալ ի լա-
լոյս, մերժեալ ի հեծութեանցս, Հեռա-
ցո՞ ի յոդրոցս, կարգութեալ ի կականման-
ցըս» (Բան ութուներորդ, Բ.):

Անընդհատ կրկնելով աստվածանալու
և աստվածացնելու իր մրժունշները Նարե-
կացին պարզապես ձկոտում է միանալ Աստ-
ծու Հետ և Աստծուն միացնել իր Հետ: ի-
րեն համարելով ամեղերական ողու մի
մասնիկը, որ ունի միտք, Հողի: չունչ,
ուժ և բահականություն, այդ միացումը
համարում է բացարձակապես հնարավոր:

Հողվածի սկզբում նշվեց, որ ժամա-
նակակիցները կործել են Նարեկացուն գա-
տել և նրան որպես Հերձվածող հեռացնել
հայ եկեղեցուց: Աւա թե որտեղ են գտնը:

վուժ արդ դժկուհությունների արժատները: Բնական է, որ շատ հետամնաց հայ եկեղեցականներ չեն կարող թափանցել Նարեկացու մտքի խորքերը և Հասկանալ, լուսնել նրան:

Նարեկացին ոչ միայն ծանօթ է եղել իր ժամանակակիցներին, այլ և նրանց կողմից սիրված մարդ է եղել, արժանի ամենայն հարգանքին և պաշտպանության: Հետագա սերունդը չէ, որ նրան սրբացրել է և դրել սրբոց զառը, այլ նրա ժամանակակիցներն են արդ արել:

Նարեկը իր ժամանակին ժողովրդականացած ընթերցանության գիրք է եղել Հայութանում: Դա մի գիրք է, որը ներբռնելով արարչաղործական ստեղծագործությունը տիեզերքի, շնչավոր և անկենդան ընության վերաբերյալ, ներդաշնակում է Ժարդկարին կյանքը, ժարդու անձն ու հոգին արարչական ուժի հետ, որպես նրա մեծության և աշուելության, ահավորու-

թյան և ամենակարողության, իմաստության և գերիշերող զորության մի մասը: Նարեկը բաց է անում դոները և ցույց է տալիս այն ճանապարհը, որով Ժարդը՝ չնչին արարութը կարող է ժուտք գործել մշանջնենականության խորանը և միանալ նրա հետ: Նարեկը Ժարդու հողեկան ապրումների, յարվածության, ինքնամուացումի ամփոփումն է: Նրա մեջ զգալու, խորհելու, պայքարելու և Հաղթանակելու ընկունակ Ժարդը դրում է և տեսնում վեհապույնը, կատարյալն ու հավերժականը, որին կարող է հասնել ինքը:

Նարեկը Ժարդու աստվածացումն է: Նարեկի վիշտը, որ բղիստմ է Նարեկացու հոգու զորությունից, նրա ժուգի գերազանց կարողությունից, նրա տօսաված անալու անհագ փափաղն է, Ժարդուն կատարելության հասցնելու սիրարորդոք տենչը: Այդ է նրա էությունը:

ԹՈՒՐԾՆ Վ. Ա. ՌԴԻԱ. ՊԵՏ



ԱՐՁՈՒՑՆԵՐ ՆՈՐ ՌԵՋԱՆԵՐԻ ՀՅԱՆՔԱՐ ԺԵՄԱՐԻՆԻ

«Էջմիածին» ամսագրի անցյալ տարվա վերջին Հոկտեմբեր դեկտեմբեր միացյալ համարում մեծ գույնակությամբ կարգացինք ծանուցում Ա. Էջմիածնի նոր բացվելիք Հոգևոր ճեմարանի ընդունելության պարմանների ժամանելու արդին իրականություն է, որ Հոգևոր ճեմարանը շուտով կրացվի և կդրծի այն ծրագրով, որ մեր Հոգևոր բարձր իշխանությունը կառաջարձրի: Ենելով ընդունելության պայմանների այն կետից, որ ճեմարան կարող են ընդունվել թե Ժիշնակարգ և թե բարձրագույն կրթություն ստացած անձինք, պետք է ճնշագրել, որ նոր ճեմարանը մասնագիտական բնույթ կունենա, առավելություն տալով կրոնական-եկեղեցական առարկաներին որոնք այնքան անհրաժեշտ են Հոգևոր պաշտոնյանների համար՝ լինեն նրանք կուսակրոն Հոգևորական, թե ծրական քահանա: Վեցամյա դասընթացը ժիշնամայն բավական է եկեղեցու համար կրթված արժանապիր Հոգևորականներ տալու:

Մեր ներկա իրականության մեջ, եղանակում սեփական հայկական պետություն, երբ եկեղեցին ազատ է իր Հոգևոր գործերն ինչը տնօրինելու, առավել և հեշտանում է Հոգևոր ճեմարանի գործը:

Ինչպես Հայտնի է, Հոգևոր Գեղորգ Դ. կաթողիկոսը նախկին ճեմարանը հիմնեց 1874 թվին: Ճեմարանը բաղկացած էր նրկումասից՝ դպրոցական և լսարանական: Դպրոցական բաժնի ծրագիրը համապատասխանում էր մեր մյուս թեմական դպրոցների ծրագրին, իսկ մասնագիտական-լսարանական բաժնն ուներ նրեց տարրչա կուրս, այն ժամանակիվ անրի-

նով երեք լրարան: Ճեմարանավարությունը հասկացվում էր ժամանադիտական բաժնի աղյարում գիտլում ունեցողը:

Հայտնի է նույնպես, որ հողեւր կոչում ունենալով հանդերձ Հին ճեմարանը, ինչպես և մեր մյուս թեմական դպրոցները, միայն Հոգևորականները չեն պատրաստում, այլ նաև ուսուցիչները, ժանկավարժները, որոնց կարիքը մեծ էր հետզհետեւ բարձրացող մեր դպրոցների համար, ուստի և ժանկավարժական առարկաները բավական մեծ տեղ էին բռնում նրանց ծրագրում:

Անեմնք արդյոք այժմ այդ պահանջը: Կատրկն ոչ, որպէս այժմ հանդաժանը ները միանգամայն փոխվել են: Անենք ունենք պետություն, ապրում ենք պետական կյանքով և մեր բարձրազան կարիքները հոգում է մեր պետությունը իր բարձրականությունները և նույնպես բազմողան կրթական ժիշնակարգ և բարձրագույն հաստատություններով: Դրանից հետեւմ է, որ նոր բացվելիք Հոգևոր ճեմարանի առաջ դրվում են միանգամայն նոր պահանջներ, միանգամայն նոր պարտավորություններ: Որոնք բոյսում են մեր եկեղեցու համար պաշտոնյաներից՝ մեր եկեղեցու համար պաշտոնյաները պատրաստելու, հանդապացյալ ժողովրդին կրթական համար կողմէ պահպանությունը: Հոգևոր պահպանությունը պետք է զարգարի նրան: Եկեղեցակարությունը և Հայրենակիրությունը: Ինչպես ամեն առաջինում, այնպես էլ արտեղ, Հոգևոր առաջինում գործողը պնտք է ըստ ամենայնի սիրի իր դործը,

իր պաշտոնը և մաքրակայլ կենցաղավարությանը բարի օրինակ հանդիսանա իր ձբջապահի համար:

Եթիրորդ հատկությունը՝ հայրենասիրությունը մեր հոգեգործականների դարձը պետք է կաղմի: Հայ եկեղեցու պատմական անցյալը ազեւ է հայրենասիրության օրինակներ: Հիշենք Վարդանանց ժամանակված հեծ հայրենասիր Ղևոնդ Երեցին, 19-րդ դարի հոգեորականներից՝ Ներսոս Աշտարկցուն և Գրիգոր եղի, Մանուչարյանին, որոնք անձնուրաց պատրաստակամությամբ մեծ օգնություն են հասցել ոռուսական բանակներին Արարատյան աշխարհը սարդարների լծից աղաւակու համար: Հիշենք Արիմյան Հայրիկին ու Մատթեոս և կաթողիկոսին, որոնք իրենց ամբողջ կյանքուն՝ արելզայությունից մինչև կաթողիկոսությունը՝ հայրենիքի սիրով են վասված Եղել, արեացող Հայաստանի և նրա ժայռի սիրով և հանուն այդ սիրո ամեն նեղություն ու զրկանք հանձն առել իրենց փշոտ ասպարեզում սուլթանական թուրքիայի դաժան պայմաններում: Ներթայում մեր կյանքում չկան դատան պայմաններ: Սակայն անակնկալներ միշտ կարող են լինել և հայրենիքը միշտ կարող է վտանգի ենթարկվել, ինչպես ականատես եղանք, երբ Փաշինտական լուհմակները դադուղով ներխութեցին մեր երկիրը:

Փորձության այդպիսի ժամերին հայքնասիր հոգեորականը առաջին օրինակը պիտի լինի հայրենիքի գրկությամբ գործում: Հենց այս մեծ հայրենական պատերազմում Ամենայն Հայոց Հայրապետության Աղքանակը Տ. Տեղակալը հայրենասիրության փայլուն օրինակը հանդիսացավ Հայ հոգեորականության մեջ: Ամեն ուղղ, թե՛ Հայաստանում, թե՛ մեր մեծ Միության սահմաններում և թե Ափյուռքում ապրող հայատացյալ հայությանը հորդոր կարդող ամեն կերպ օգնելու մեր աղաւար կարմիր Բանակին փոստով ու Հայքանուկով ամփությունը՝ իր սրբազն առությունը՝ իրավու ոչնչացնելու քսողաքակիթության կեղծ քողի տակ եածկված

իսկական բարբարուների և միջնադարյան խալաքի սպով վարակված հոների գարշելի դոյությունը: Եվ ուրախությամբ արձանագրում ենք, որ Տ. Տեղակալի կոչով թերմ արձագանք զոտավ բոլոր Հայ հոգեորականության մեջում ության և հավատացյալների լրջան ներում: Տ. Տեղակալի հայրենասիրության այս զեղեցիկ օրինակը պետք է համակի ամենուրեք զանված Հայ հոգեորականներին՝ նմանվելու նրան և նրա պես ու նրա ողով զորմելու: Հայրենասիրության արդ ողին վաս ու բորբոք պիտի մնա նոր բացվելիք ճեմարանի սաների մեջ: Ձերմ հայրենասիրություն և ուսման բուռն տեսնչ, այս երկու բարեմասնությունը պետք է զարդարեն նոր ճեմարանականին:

Հին ճեմարանը զիշերօթիկ գործոց էր: Հարյուրավոր աշակերտներ միաժամ էին ապրում մի մեծ ընտանիքի պես մինչույն ոհեժիմով: Բնականաբար նրանք հենց ուստարված սկզբից պատանեկան հասակին հատուկ ընկերական ջերմ սիրով կապրում էին իրար: Հատ հուզիչ օրինակներ ենք տեսնել, մինչև անձնուրացության հանող, որ հիացմունք է պատճառել: Այս անկնղջ ընկերասիրությունը, որն ընդհանրապես զեպի մարդասիրություն և հայրենասիրություն է տանում, ցանկացի է, որ բուն դեմք նաև նոր բացմելիք ճեմարանում և մշտապես շաղկապի նրա նոր սաներին կյանքի բոլոր պարագաներում:

Աղատ լինելով տնաեական ամեն աեսակի հոգսերից, ընականաբար, ճեմարանցին իր՝ աշակերտական կամ ուսանողական կյանքի ընթացքում օրինակելի աշակերտ էր և ուսանող: Ճեմարանում ամոթ էր Համարվում երկու ապրի նստել նույն դուռը առովհետև ամեն բան պատրաստի ստանալով նա դիտակցում էր, որ պեսք է արդարացնել իր վրա ծափառ զումարները ու օրինակելի աշակերտությամբ և ուսման սիրով փոխարենը հատուցել: Բացի ընթացիկ դաշները բարեխզնությունը սովորելուց, ճեմարանցին շատ էր կարգում: Երենց ուսուցիչների զեկավարությամբ աշկերաները ճեմարանից վերց-

նուած էին անհրաժեշտ դրբեր գրականության, պատմաւթյան, աշխարհագրության և այլ ավանդվող առարկաների վերաբերյալ և դրանց շնորհիվ բազմակողմանիորեն ծանոթանում թե դպրոցական և թե լսարանական բաժնում ավանդվող առարկաների հետ։ Հայերենի հետ հավասար ճեմարանցին ազգային օգտվում էր նաև ոռուերեն բեղվով եղած հարուստ գրականությունից։

Բացի պարտադիր երկու լրիվ ժամից, 20 բուքի ընդհատումով, որոնք երեկոները հատկացվում էին հաջորդ օրվա դասերը սովորելու համար (այդ ժամերը սերուզություն էին կոչվում), ճեմարանցին մընացած աղասի ժամերին ևս շատ էր աշխատում, զրում-կարդում այնքան շատ, որ դժվարությամբ էր բաժանելում գրավոր աշխատանքից կոմ կարգացած գրքից, երբ պարտադրաբար որոշյալ ժամին զանգը հնչելուն պես պետք է ննջարան դնար քննիրու։ Շատերը սովորություն ունեին առավոտները սրոշված ժամից էլ ապելի կանուխ վերկենալ և ընթերցանությամբ կամ ուսուցչի տված դրավոր աշխատանքով ըդրադիլ։ Երկար տարիներ ճեմարով ճեմարանում և վարդելով ժամերով նստել մի զբքի կամ զրավոր նյութի վրա, ընականաբար այս զեղացիկ հատկությունն այնուհետև անրաժան էր մնում ճեմարանցուց, որը լիակատար դասընթացն ախարտելուց հետո էլ կյանքի մէջ իր ընտրած տապարեզում, մեծ մասամբ հոգեկոր կամ ուսուցչական, պիտունի, և թեզմանավոր մշակ էր դատում մեր այս ժամանակվա հոգեկոր և մտավոր անդամանում։ Եվ մեր ջերմ փափառ է, որ ուսման սիրու այն ժամանցն ու տենչը, որ ուներ էին ճեմարանցին, փոխանցվեր նոր ճեմարանցուն։

Թո՞ղ նոր ճեմարանի սաները արդյունավոր կերպով անցկացնեն այն վեց տարին, որ նրանց արվում է ուսման լիակատար գառընթացն ավարտելու համար։

Հին ճեմարանի ուսուցչական կազմի կազմը իր սաների հետ շառ ջերմ էր։ Ճե-

մարանի ուսուցիչները շատ էին կապված իրենց աշակերտների և ուսանողների հետ, նրանցից շատերը իրենց ազատ ժամերին գասերից դուրս ևս դալիս էին ճեմարան և հաճախակի զրուցում իրենց աշակերտների հետ։ Հաճախ նրանք ժամանակցում էին աշակերտական ընդհանուր զրուանըներին գեղի ձեռատունի մեծ անսուրը կամ վազարշապատի ընդարձակ այգիները, Քառակի, Արագսի ափը, թարդմանիշների տունին Օլական և այլուր ու այսպիսով միապաղազ կյանքով ապրող գիշերօթիկ զրուցի սաների կենցաղի մեջ թարմություն մտցնում և նրանց էլ ապելի մեծ սիրով կապում Մայր—ճեմարանի հետ։ Նոր տուրին ամբողջ աշակերտությունը զիմապրում էր անպատճառ ուսուցչական կադրի հետ և մինչև ուշ զիշեր ուրախ ժամանակակի անցկացնում ընտանեկան ու ժամերժական այս հավաքություն։

Մեր ցանկությունն է, որ նոր բացվելիք հոգեկոր ճեմարանի ուսուցչական խումբը նույնական սերտ սիրով կազմի իր սաների հետ և պաշտոնական ժամերից դուրս ևս հաճախակի այցելի նրանց և իր խորհուրդներով ցանկացի ուղղություն տա ուսման ծարակով տոգորված ու միննույն կյանքով ապրող զիշերօթիկ սաների ժամերժայցին։

Ավելացնենք և այս որ հոգեկոր ճեմարանը, գտնվելով Մայր-Աթոռում՝ Ս. էջմիածնում, Արարարյան դաշտի համարյա կենարոնում, բնության գեղեցկության տեսակետից ևս նախանձելի տեղադրություն ունի։ Ընդարձակ Արարարյան դաշտը, վիթիւարի Մասիս ու Հափա Արագածոր և սրանց հետ շուրջպար բնած մյուս լեռները՝ սրանք բոլորը միասին խաղաղ, հանդիսատ որաժադրություն են առեղծում ճեմարանում ապրողի համար։ Այսուղ հընարավոր չէ ճամփանալ, դանդաղամբել նեղ հորիղոնից, երկարառն ամպաժածությունից կամ ավելորդ անձրէներից։ Բավկական է թեկուզ մի անգամ ներսիսան լնի ափից

զիտել անեման, երկարառու բազմաղան
գույներով շոլացող ու վառվող՝ արևմուտք,
վերջալույսը՝ և զա երրեք չի մոռացվի
ժիշտ կյանքի վերջը։ Սքանչելի այս բնու-
թյունը ևս իր բարերար աղղեցությունն է
շործում այսեղ ապրողների վրա։

Ի սրտէ շանկանում ենք հաջողաւթյուն
նոր բացվելիք հոգեոր ճեմարանին, նըս-
անդրամիկ սաներին ու դասախոսներին,
որոնք մեծ ոգմորությունը վառված կլլ-
թյունը վեն իրենց պատասխանատու աշխատանքին,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

